Ազգ
Azg
2 ՄԱՅԻՍ 2013 ՀԻՆԳՇԱԲԹԻ 71(5154)
ISSN: 1829-1651

## Շանթ Ավետիսյանի նկարների շարքը 1,5 միլիոնով է վաճառվել



«Ահրամ Օն-լայն» արաբական կայքի փոխանցմամբ՝ եգիպտահայ նկարիչ Շանթ Ավետիսյանի «Նեղոսի սրբապատկերները» նկարների շարքը (120 նկարներից բաղկացած) Քաթարում (Դոհա) կայացած «Սոթբիի» ժամանակակից արվեստի աճուրդի ժամանակ վաճառվել է ռեկորդային 1.565.000 դոլարով: Նախնական գինը 1 միլիոն է եղել: Ըստ մեկնաբանների՝ սա ամենաբարձր գինն է, որ երբեւէ վճարվել է Մերձավոր Արեւելքում ստեղծագործող որեւէ նկարչի:

Շանթ Ավետիսյանը ծնվել է Կահիրեում 1951 թվին: Նրան ընդարձակ հոդվածով անդրադարձել է «**Ազգը**» իր «Մշակույթ» հավելվածում:

Ընդհանուր առմամբ Դոհայի աճուրդը ռեկորդային է եղել նաեւ «Սոթբիի» համար: Ստացվել է 15 միլիոն դոլարից ավելի գումար, որը գերազանցում է մինչ առայժմ Մերձավոր Արեւելքում գրանցված եկամուտները:

Դոհան ճանաչված է որպես արվեստի խթանման կենտրոն: Աճուրդի ներկայացված իրերը հիմնականում վաճառվել են խմբաքանակային ձեւով: Ընդգրկված են եղել արվեստագետներ Իրանից եւ արաբական երկրներից: Դոնալդ Ջադի «Անվերնագիր» շարքը վաճառվել է 3,5 միլիոն դոլարով, իսկ Ջուլի Մեհրետուի նկարների շարքը՝ 3 միլիոն դոլարով: Երրորդ ամենաբարձր գինը վճարվել է Շանթ Ավետիսյանի նկարաշարին: Հ. Ծ.

# Աշխատավորների օրն ու նրանց խախտված իրավունքները

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Եթե մեր համաքաղաքացիներին հարցնենք՝ ո՞րն է պետության թիվ մեկ խնդիրը, մեծամասնությունը վստահաբար կպատասխանի՝ աշխատատեղերի բացակայությունը: Դա խորացնում է արտագաղթը, աղքատության տոկոսի աճը: Մեր հայրենակիցների մեծ մասը բռնում է խոպանի ճանապարհը հենց աշխատանք չունենալու պատճառով: Սա հարց է, որի մասին խոսվում է գրեթե ամեն օր, սակայն այդպես էլ լուծում չի ստանում: Պատճառները բազմաթիվ են՝ երկրի սոցիալ-տնտեսական վիճակից մինչեւ մենաշնորհներ ու արտահանման խրախուսում:

Սակայն շատ քչերն են խոսում աշխատանք ունեցող մարդկանց ու հատկապես նրանց իրավունքների մասին:

Խոսքն այս պարագայում «Նաիրիտի»-ի, «Արմավիա»-ի կամ նմանատիպ այլ կազմակերպությունների աշխատակիցների մասին չէ, որոնք 8-9 ամիս աշխատավարձ չստանալով արդեն բռնել են փողոցային պայքարի ուղին եւ վարչապետից ու նախագահից են պահանջում իրենց հարցին լուծում տալ:

Տես էջ 2




## Ռուսլան Ցարնին ներողություն է խնդրել հայ համայնքից

Ապրիլի 30-ին Ռուսլան Ցարնին՝ հորեղբայրը Թամերլան ու Ջոհար Ցարնաեւների, որոնք համարվում են վերջերս Բոստոնի մարաթոնի ժամանակ տեղի ունեցած ահաբեկչության հեղինակները, անձամբ կապվել է Բոստոնում հրատարակվող «Արմինյն միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթի հետ ու հայ համայնքից ներողություն խնդրել իր վերջին հայտարարությունների համար:

Բոստոնի մարաթոնի ժամանակ տեղի ունեցած պայթյունների մասին իր վերջին քննարկումներում Ռուսլան Ցարնին հիշատակել էր հայերին: Լրատվամի-



ջոցներին փոխանցած իր նախկին հայտարարություններում նա խոսել էր վերջերս իսլամ ընդունած Միշայի մասին (Միշայի անունն այժմ հաղորդվում է որպես Միխայիլ Ալախվերդով): Ռուսլան Ցարնին ասել էր՝ Միշան, որն ունի հայկական ծագում, ոչ մուսուլմանների հանդեպ բռնության պատկերացումներով «լվացել» է Թամերլան Ցարնաեւի ուղեղը:

«Արմինյն միրոր սփեքթեյթրից» տեղեկանում ենք, որ Ռուսլան Ցարնին, զանգելով թերթի խմբագրություն, նշել է, որ Միշայի ազգային պատկանելությունն իր հայտարարության հետ որեւէ կապ չունի: «Հայաստանը շատ հզոր մշակույթ ունի, կուզենայի այդ հայտարարությունս երբեք արած չլինեի», ասել է Ռուսլան Ցարնին՝ եւս մեկ անգամ ներողություն խնդրելով, որ հայ համայնքի անունը կապել է «այս չարամիտ հրադարձությանը»:

Թեմայի մասին հեռախոսով Ցարնին խոսել է հակիրճ եւ ասել, որ չի կարող պատասխանել լրացուցիչ հարցերի կամ մեկնաբանել:

Իսկ որոնումը հեռախոսահամարի, որից զանգահարել էր Ցարնին, հաստատել է՝ հեռախոսազանգը ստացվել է Մերիլենդի մի բջջային հեռախոսից՝ գրանցված հենց Ցարնիի անունով:

«**Ազգ**»-ը ավելի մանրամասն կանդրադառնա Ցարնիներին՝ առաջիկայում Ի. Պ.

## Վերափոխվող Թուրքիայում այլեւս չի բացահայտվի Դինքի սպանությունը

*Պաշտոնի բարձրացման է արժանացել սպանության պատասխանատուն*

Հ. ՉԱՔՐՅԱՆ

Ինչպես հայտնի է, անցյալ տարվա նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Ստամբուլի հայաշատ Ֆերիքոյ եւ Սամաթիա թաղամասերում հարձակման թիրախ էին դարձել տարեց հայ կանայք: Մարդու իրավունքների միության Ստամբուլի մասնաճյուղը այդ հարձակումները որակել էր ռասիստական, դատապարտելով անգործության համար հարձակումները 3 ամիս շարունակ ողջամտորեն շրջանցող իրավապահ մարմիններին:

Հարձակվողները բնակարանում միայնակ ապրող տարեց հայ կանանց երկուսին դաժան ծեծի ենթարկելուց, դաշունահարելուց հետո, կոկորդը կտրելով սպանել են, երկուսի աչքը կուրացրել, մեկին էլ այն աստիճանի են հասցրել, որ 2 շաբաթ պառկի հիվանդանոցի վերակենդանացման բաժնում:

Ստամբուլի հայ համայնքը դեռեւս չէր հաղթահարել հայ կանանց դեմ իրագործված հարձակումների ցնցումը, ապրիլի վերջերին մարդասպան թուրք հրոսակը նոր հարձակումներ է իրականացնում, այս անգամ՝ խմբակային: Հարձակման թիրախ են դառնում Ստամբուլի ասիական հատվածի արվարձաններից Աթաշեհիրի «Նոր հույս» քրիստոնեական եկեղեցին, Մարմարա ծովի Իշխանաց կղզիներից Բուրգազի հունական եկեղեցին:

Հասկանալի է, որ այս հարձակումներն էլ նույն ողջամտությամբ շրջանցում են թուրքական լրատվամիջոցները, «Ակօս»-ն է միայն արձագանքում: Ստամբուլի հայաշատ թաղամասերում տարեց հայ կանանց կոկորդը դաշույնով կտրելն ու դաժան ծեծի ենթարկելով կուրացնելը, իսկ արվարձաններում եկեղեցիների վրա 15-18 տարեկան պատանի հրոսակների ձեռնարկած հարձակումները Եվրոմիությանն անդամակցելու հաշվարկով վերափոխվող Թուրքիայի իրական պատկերն են, որքան էլ աղաղակող այս փաստերն անընդունելի լինեն Հայաստանում թուրք-ադրբեջանական քարոզչություն ծավալող պնակալեզ հայատյաց տականքներին:

Ի դեպ, այլատյացության պարագայում Թուրքիայի խնդիրը սոսկ քրիստոնյա հայերը, հույները, ասորիները չեն: Թուրք հրոսակն այդ նույն ատելությամբ վերաբերվում է նաեւ ալավիներին, այն պատճառով, որ վերջիններս դավանանքով սուննի չեն, էլ չենք խոսում քրդերի մասին:

Ստամբուլի հայաշատ թաղամասերում հայ կանանց, իսկ արվարձաններում քրիստոնեական եկեղեցիների վրա հարձակումները կանխելու թերեւս ամենաարդյունավետ միջոցը Հրանտ Դինքի սպանության բուն կազմակերպիչների բացահայտումն էր: Տես էջ 8

## Գործարքների քանակն անշարժ գույքի շուկայում ավելանում է

*Գնային էական փոփոխություններ դեռ չեն արձանագրվում*

Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ շուկայի վերլուծության տվյալների համաձայն, 2013-ի մարտին, Հայաստանի անշարժ գույքի շուկայում իրականացվել է 16282 գործարք, ինչը 11,7 տոկոսով բարձր է նախորդ ամսվա՝ փետրվարի եւ 17,9 տոկոսով՝ 2012-ի մարտի գործարքների համեմատ: Նշենք, որ փետրվարին նույնպես զգալի գործարքների քանակի զգալի աճ էր արձանագրվել:

Օտարման գործարքների քանակը մարտին փետրվարի համեմատ աճել է 13,5 տոկոսով, իսկ անցյալ տարվա մարտի համեմատ՝ 14,5 տոկոսով: 4132 օտարման գործարքներից առուվաճառքներինը կազմել է 73,2 տոկոսը: Մնացածը նվիրատվություններն ու փոխանակություններն են: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 39,6 տոկոսն արձանագրվել է Երեւան քաղաքում, իսկ առուվաճառքի գործարքների 64 տոկոսն արձանագրվել է բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ: 2013-ի փետրվարի համեմատ, մարտին բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում աճել է 28,9 տոկոսով, իսկ նախորդ տարվա մարտի համեմատ՝ 8,7 տոկոսով:

Բնակարանների շուկայական միջին գները Երեւանում այս տարվա մարտին փետրվարի համեմատ աճել են 0,7 տոկոսով: Ըստ վարչական շրջանների՝ Երեւանում բնակարանների 1 քմ մակերեսի միջին շուկայական գները այսպիսին են եղել.

Տես էջ 3

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | մարտ 2012 թ. | մարտ 2013 թ. | փետրվար 2012 թ. |
| Կենտրոն | 400000 | 426100 | 424100 |
| Արաբկիր | 333050 | 353500 | 352100 |
| Քանաքեռ-Զեյթուն | 260000 | 281400 | 280200 |
| Նոր Նորք | 225050 | 248100 | 245100 |
| Ավան | 233000 | 256800 | 255000 |
| Էրեբունի | 233100 | 247100 | 245200 |
| Շենգավիթ | 229000 | 252500 | 251200 |
| Դավթաշեն | 254500 | 272000 | 269900 |
| Աջափնյակ | 221050 | 245000 | 243000 |
| Մալաթիա-Սեբաստիա | 219750 | 237000 | 235600 |
| Նուբարաշեն | 140100 | 148000 | 146200 |
| Միջինը Երեւանում (բացի Նորք-Մարաշից) | 249900 | 269800 | 268000 |

# Տոնական, բայց ոչ կոնյակ

Կարծելով, թե երեկ աշխատանքային օր չէր, ու կարելի է ավտոբուս նստել նաեւ Ներքեւի կանգառից, որտեղից աշխատանքային օրերին անհնար է լինում ավտոբուս ոչ միայն նստելը, այլեւ այնտեղ մտնելը, գնացի հենց Ներքեւի կանգառ: Մայիսմեկյան ջերմ արեւը չէր ոգեւորում կանգառում երկու կանանց, որոնցից մեկն ինձ ժամը հարցրեց, եւ մեկ տղայի, որի սպորտային համազգեստից դժվար էր կռահել՝ Աբովյանից Երեւան է գնում, որ ինչ անի: Դեղին «Բոգդան» մակնիշի ավտոբուսը եկավ՝ փաստելով, որ ոչ աշխատանքային այս օրը ավտոբուսի վարորդներն աշխատում են, սակայն դատելով վարորդի դեմքի արտահայտությունից, այդքան էլ գոհ չեն դրա համար:



Ավտոբուսում, գաղջ մթնոլորտ էր, բոլորը լուռ էին, ոչ ոք չէր ժպտում, ու եթե կանգառներից մեկում մի կին, հավանաբար թոռնիկի հետ՝ ընտիր եղրեւանիները ձեռքին չնստեր ավտոբուս, ու հոտը չտարածվեր սրահում, գաղջ մթնոլորտը նաեւ մեր ավտոբուսի ամենամեծ պրոբլեմը կլիներ: Հասանք Երեւան, ու այստեղ տեղի ունեցավ այն, ինչի պատճառով էլ գրվել է այս պատմությունը: Կինը հանկարծ սկսեց դժգոհել: Տիկնոջը մասնավորապես վրդովեցրել էր այն, որ մայիսի մեկն է, բայց քաղաքը տոնական չէ, մարդիկ չեն ժպտում, ուրախանում, երեխաների ձեռքերին փուչիկներ չկան, որ ոչ մի տեղ երաժշտություն չկա...Կինը այս ամենն արտահայտում էր բարձրաձայն, ու ավտոբուսում նստած երիտասարդները՝ չհասկացողի իրենց դեմքերով, ծիծաղում էին տիկնոջ բողոքի վրա, կանայք սեւեռված նայում, ոմանք հավանաբար գժի տեղ էին դնում բողոքավորին, իսկ ոմանց համար էլ կնոջ բողոքի բարձրաձայն արտահայտումը խիստ դրվատելի էր, քանի որ կանայք սիրում են, երբ կինը ուժ ու համարձակություն է ունենում արտահայտելու իր բողոքը՝ նշանակություն չունի, թե ինչի հետ կապված: Եվ միայն մի ծերուկ, որը կոստյումով էր ու բարակ բեղերով, լուռ ժպտում էր, նա դողդոջուն ձեռքերով բռնել էր կուսակցական տոմսը. ծերուկը կոմունիստ էր:

Իսկ ավտոբուսի վարորդը գյումրեցի էր: Սկզբում նա լռում էր, իսկ երբ կինը մի քանի վայրկյանով դադարեցրեց իր անդադար բողոքը, գյումրեցի վարորդը միացրեց ավտոբուսի մագնիտոֆոնը. «Էս էլ ձեզ երաժշտություն», ասաց գյումրեցին: Երաժշտությունն, իհարկե, ռեստորանային էր, բայց այդ պահին հաստատ դա կարեւոր չէր. ավտոբուսը սկսեց ժպտալ, մի կին, որը մինչ այդ ուշադիր նայում էր բողոքավոր կնոջը, երաժշտության հնչյունների ներքո ասաց նրան. «Ինչ սիրուն ծաղիկներ են... ինչ սիրուն երեխա է»:

Դժվար էր իջնել ավտոբուսից, մանավանդ որ իջնելու պատճառը աշխատանքի գնալն է. լրագրողները, ինչպես ավտոբուսի ու տաքսու վարորդները, ինչպես խանութպանները, մայիսի մեկին աշխատում են:

Ճանապարհին պարզվեց, որ սրճարաններն էլ, մամուլի կրպակներն էլ, ոստիկաններն էլ, եթե մեզ վրա դեռ չեն հարձակվել, ուրեմն՝ զինվորներն էլ, փողոցում ազդանշաններով անցնող շտապ օգնության մեքենան փաստեց, որ բժիշկներն էլ երեկ աշխատում են: Ինչպես հասկացա՝ երեկ շատերն են աշխատում, ինչպես զգացի, դատելով ավտոբուսում երեկվա մարդաքանակից, Հայաստանում շատերն են աշխատում, քանի որ ի տարբերություն աշխատանքային օրերի՝ ավտոբուսը կիսադատարկ էր: Լավ է:

Բայց ինչ է ստացվում, եթե Հայաստանում աշխատանք ունեցողներից հանենք լրագրողներին, տաքսու եւ ավտոբուսի վարորդներին, ոստիկաններին, զինվորներին, բժիշկներին, ապա կմնան ուսուցիչները, բանկերի աշխատողները, եւ էլի չգիտեմ, թե ով: Հետեւաբար, եթե այսօր տոն է, իսկ տոնն արտահայտվում է չաշխատելով, ապա երեկ ոչ թե աշխատավորների տոնն էր, այլ ուսուցիչների, բանկերի աշխատողների ու էլի չգիտեմ թե ում: Այսինքն մենք՝ Հայաստանում մայիսի մեկը կամ պետք է անվանենք մասնագիտական տոն, ոչ թե համընդհանուր, կամ պետք է ընդունենք, որ մեր երկրում տոնն արտահայտվում է աշխատելով, ոչ թե չաշխատելով: Այսինքն՝ Հայաստանի այն քաղաքացին, ով աշխատանք ունի, արդեն տոնի մեջ է:

Կոմունիստ ծերուկը՝ մեր ավտոբուսի մեջ, հավանաբար գնում էր կուսակից ընկերների ամենամյա մայիսմեկյան երթին, որտեղ պապիկները գնում են իրենց թոռնիկների հետ՝ առանց կարեւորելու վերջիններիս ցանկությունը, թոռնիկի ձեռքը բռնած կինը չիմացա, թե որտեղ իջավ, որտեղ էր գնում եւ ինչու:

Սարյանի արձանի դիմաց նկարիչներն իրենց կտավներն են դրել վաճառքի. նկարիչներն էլ ուրեմն աշխատում են, մայրաքաղաքից դուրս գտնվող խաղատներն էլ, մայրաքաղաքում գտնվող բուքմեյքերային կետերն էլ, վիճակախաղի տոմս վաճառողներն էլ, եկեղեցիներում մոմավաճառ կանայք էլ, ռեստորաններում երիտասարդ մատուցողներն էլ՝ աստվածաբանի, կամ պատմաբանի մասնագիտությամբ:

Մայիսմեկյան արեւը ջերմացնում է. մարդիկ գոնե եղանակի առումով դժգոհելու առիթ չունեն. Արեւն իր կողմից տոնն ապահովվում է, պարզապես կան մարդիկ, որոնք տոն ստեղծում են (անգամ առանց արեւի օգնության), ու կան մարդիկ, որոնք տոն ունենում են միայն օրացույցին նայելուց հետո, կամ չեն ունենում:

Իրականում մենք շատ աշխատողներ ունենք՝ երկրում էլ, դրսում էլ, հոգով էլ, բնավորությամբ էլ, ստիպված էլ: Խնդիրն ամենեւին աշխատատեղերի բացակայությունը չէ, խնդիրը տոն սարքելու ունակության բացակայությունն է՝ շատ աշխատողների մեջ, եւ չաշխատողների:

Երեկ տոն էր... Իսկական տոն, որտեղ ամենեւին էլ պարտադիր չէ կոնյակը, կամ... պարտադիր է:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

ՀԱՆԴՈՒՐԺՈՒՄ ԵՆՔ ՍՏԻՊՎԱԾ

# Աշխատավորների օրն ու նրանց խախտված իրավունքները

*1-ին էջից*

**Իրականում մեր երկրում աշխատողների իրավունքները խախտվում են ամեն օր: Եթե դու միջազգային որեւէ կազմակերպությունում չես աշխատում, ապա մեծ է հավանականությունը, որ քո իրավունքները կխախտվեն, շատ հաճախ հենց քո իմացությամբ: Պատճառն այն է, որ գործատուն գիտի, որ իր մի տեղի համար պայքարում է միանգամից մի քանի տասնյակ մարդ, հետեւաբար կարողանում է չարաշահել եւ ավելի շատ աշխատեցնել նույն վարձավճարի պայմաններում:**

**Դա վերաբերում է ինչպես պետական, այնպես էլ մասնավոր կառույցներին ու նաեւ բոլորի իրավունքների համար պայքարող լրատվամիջոցներին:**

**Շատերը կատարում են այս կամ այն անբարեխիղճ գործընկերոջ կիսատ թողած կամ չսկսած աշխատանքը, սակայն երբեք չեն բարձրաձայնում հավելյալ աշխատավարձի մասին, ինչո՞ւ, որովհետեւ պատասխանն ակնհայտ է. «Դուրդ չի գալիս, կարող ես դուրս գալ, քո նման տասնյակ մարդիկ սպասում են այդ աշխատանքին»: Շատերի աշխատավարձն են ուշացնում տալիս, սակայն այդ մասին հազվադեպ են բարձրաձայնում կամ դիմում լուրջ քայլերի: Աշխատակիցը տիրապետում է իր իրավունքներին, սակայն լռում է, որովհետեւ, մեկ-երկու անգամ խոսելու պարագայում նախ կդառնա տնօրենի «աչքի գրողը», իսկ հետո կհեռացվի: Այս պարագայում աշխատողների իրավունքը պաշտպանող արհմիությունները «մեռած» վիճակում են գտնվում եւ որեւէ կերպ չեն կարող օժանդակել իր իրավունքների համար պայքարող այս կամ այն աշխատակցին: Նոր աշխատանքը գտնելու հավանականությունն էլ զրոյական է: Սա էլ այն պարագայում, որ Հայաստանում նվազագույն աշխատավարձով հնարավոր չէ գոնե կես ամիս ապրել:**

**Բացի դրանից, բազմաթիվ կազմակերպություններում չի պահպանվում հանգստյան կամ տոն օրերին աշխատելու համար կրկնակի վարձատրելու սկզբունքը: Դա վերաբերում է և՛ լրատվամիջոցներին, և՛ պետական ու մասնավոր կառույցներին: Լրագրող ընկերներիցս քանի՞սը կհիշեն, որ տոն կամ հանգստյան օրերին աշխատել են, գնացել են հանրահավաքների կամ որեւէ երթի, կամ չնախատեսված գործուղում է եղել շաբաթ-կիրակի օրերին, եւ այդ աշխատանքի համար կրկնակի վարձատրվել են:**

**Առավել խայտառակ է իրավիճակը սպասարկման ոլորտում: Այստեղ ոչ մի օրենք հաշվի չի առնվում: Մի քանի տարի առաջ, ամանորյա տոներից հետո Ծաղկաձորում էի եւ հոդված էի պատրաստում ծաղկաձորյան հանգստի մասին: Զրուցեցի հյուրանոցային համալիրների մենեջերների եւ մատուցողուհիների հետ: Նրանք բոլորը միաբերան կրկնում էին՝ ամանորյա տոներին աշխատել են քառակի ծանրաբեռնվածությամբ, սակայն վարձավճարը մնացել է նույնը, դա այն պարագայում, երբ գները այդ օրերին կրկնակի եռակի թանկանում են: Նույնը վերաբերում է սուպերմարկետների աշխատողներին, սակայն այս աշխատակիցները չեն բողոքում. «Իսկ ո՞ւր գնանք, ի՞նչ անենք» պատասխանում են նրանք: Եվ իսկապես, ի՞նչ անի աշխատակիցը, ո՞ւր դիմի: Աշխատանքի պետական տեսչությունն էլ, մեղմ ասած, չի փայլում իր գործունեությամբ, սրան գումարվում է նաեւ հայկական հոգեբանությունը՝ դիմելն ամոթ է, մենք գործ տվող չենք, ու նաեւ այն, որ հնարավոր չէ աշխատանք գտնել... ստացվում է մի իրավիճակ, երբ դժգոհ են թե՛ աշխատողներ, թե՛ աշխատանք փնտրողները:**

# Կոմունիստների մայիսմեկյան նոստալգիկ երթը





«Պրոլետարներ բոլոր երկրների միացեք», «Հավերժ Ռուսաստանի հետ», «Հայաստանի կոմունիստական կուսակցություն» եւ այլ լոզունգներով, Մարքսի, Լենինի, Ստեփան Շահումյանի նկարներով, Խորհրդային Հայաստանի եւ Խորհրդային Միության կարմիր դրոշներով երեկ մայիսմեկյան երթ եւ հանրահավաք էին կազմակերպել Հայաստանի կոմունիստները: Աշխատավորների օրվան նվիրված նրանց երթը, սկսվելով Մաշտոցի պողոտայից, շարունակվեց Ամիրյան փողոցով եւ ավարտվեց Շահումյանի հրապարակում:

Երթին եւ հանրահավաքին մասնակցում էին մի քանի հարյուր մարդ, հիմնականում ավագ սերնդի ներկայացուցիչներ եւ պատանիներ ու դպրոցական բարձր տարիքի երեխաներ: Երթը ընթանում էր խաղաղ, կազմակերպիչները ժամանակ առ ժամանակ հնչեցնում էին խորհրդային տարիներին հայտնի կոչերը՝ անցորդների ժպիտն առաջացնելով: Հնչում էր դարձյալ այդ տարիների շքերթի ժամանակ հնչող նվագախմբային երաժշտությունը, շատերին հիշեցնելով խորհրդային շրջանի մանկության կամ պատանեկության տարիները:

Ա. Ս.

# Հրաձգության մրցույթ

**Օրերս պաշտպանության նախարարությունը BlogNews-ի հետ համատեղ հրաձգության մրցույթ էր կազմակերպել բլոգերների եւ լրագրողների միջեւ:**

**Սկզբում ՊՆ աշխատակիցները մասնակիցներին մանրամասն ծանոթացրին զենքին ու կրակելու նրբություններին, ապա սկսվեց մրցույթը:**

**Լրագրողները ջախջախիչ հաղթանակ տարան բլոգերների նկատմամբ եւ նույնիսկ բլոգերների թիմի՝ բանակում ծառայած տղաները չկարողացան կրճատել հաշվի միջեւ եղած տարբերությունը:**

**Յուրաքանչյուր թիմից մրցում էին տասը հոգի:**

**Մրցույթի վերջում լավագույն երեք հրաձիգ ճանաչվեցին Էրիկ Անթառանյանը (9+8+9+10), Մանանա Հովակիմյանը (10+10+9+6) եւ Արծրուն Հովհաննիսյանը (10+8+8+7):**

**Լավագույններին ՊՆ-ն հատուկ նվերներ է խոստացել:**

**Հաջորդ մրցույթը կլինի Strike ball-ը:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

“AZG” Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Աշխատանք կա, բայց ...

## Գործազրկության նվազեցումը եւ աշխատավարձերի առաջանցիկ բարձրացումը պետք է զուգակցվեն

Աշխատանքի եւ աշխատավորների հերթական տոնին՝ մայիսի 1-ին, մեր երկրի համար առաջնահերթ լուծում պահանջողներից է աշխատանք գտնելու հարցը: Անկախության շրջանի առաջին տարիներին ԽՍՀՄ փլուզման, նոր տնտեսական համակարգին անցնելու եւ 90-ականների Հայաստանի իշխանությունների անձեռնհաս կառավարման հետեւանքով 600 հազար աշխատատեղեր փակվեցին (Համաշխարհային բանկի տվյալներով): Հիմա, ավելի քան 20 տարի անց, շատ բան է փոխվել, բայց զբաղվածության հարցը շարունակում է հրատապ մնալ: Ավելի շուտ, փոխվել է աշխատանք գտնելու հասկացությունն ինքը:

Եթե 90-ականներին «աշխատանք չկա» արտահայտությունն ամենաուղղակի իմաստն ուներ, ապա հիմա այդ եւ «աշխատանք գտնել» արտահայտությունների իմաստը էապես փոխվել է: Ի տարբերություն 90-ականների, «աշխատանք չկա» ասողներն այժմ պարզապես արդարացնում են իրենց աշխատել չցանկանալու սովորությունը: Աշխատանք կա եւ ցանկության դեպքում գտնելը դժվար չէ: Այլ հարց է, որ շատ դժվար է գտնել արժանապատիվ աշխատավարձով, պայմաններով, գործատուների կողմից խաբված չլինելու մտավախություններից զերծ եւ ըստ մասնագիտության աշխատանք:

Մյուս կողմից՝ աշխատաշուկայում բազմաթիվ մասնագիտությունների գծով առկա են թափուր աշխատատեղեր: Խոսքը ծրագրավորողների, տնտեսագետների, հաշվապահների, դասավանդողների, մենեջերների, գործակալների, դիզայներների, վաճառողների, մատուցողների, խոհարարների, հացթուխների, սարքավորումների եւ համակարգչային օպերատորների, բուժքույրերի, գանձապահների, ավտովերանորոգողների, համակարգչային օպերատորների, էլեկտրիկների, կարողների, վարորդների, կոշկագործների, կռունկավարների, փականագործների, խառատների, հղկողների եւ բանվորական այլ մասնագիտությունների, ինչպես նաեւ մարզերում տարբեր նեղ մասնագիտացումներով բժիշկների մասին է: Համենայն դեպս, «Զբաղվածության պետական ծառայության» կողմից մշտապես շեշտվում է այս մասին:

Սրան էլ ավելացնենք պետական համակարգում նաեւ այլ մասնագետների բազմաթիվ թափուր աշխատատեղերը, որոնք չեն լրացվում դարձյալ նույն՝ ցածր աշխատավարձերի պատճառով:

Հայաստանում գործազրկության մակարդակը փետրվար ամսվա տվյալներով 19,7 տոկոս է կազմել, իսկ ըստ ԵՄ Հայաստանին վերաբերող զեկույցի՝ 18,4 տոկոս: «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տվյալներով, այս տարվա մարտի 1-ի դրությամբ աշխատանք փնտրողների թիվը մեր երկրում կազմում է 71,8 հազար է, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 11,3 տոկոսով (79,9 հազ. մարդ): Գործազուրկների թվաքանակը կազմում է աշխատանք փնտրողների 85 տոկոսը կամ 61,1 հազար:

Ի դեպ, հետաքրքրական է այս ցուցանիշները համեմատել Եվրոմիության անդամ երկիր եւ շատ հայաստանցիների երազանք Իտալիայի գործազրկության ցուցանիշների հետ: Համաձայն այդ երկրի պաշտոնական վիճակագրության, գործազրկության մակարդակը Իտալիայում կազմում է 27 տոկոս՝ մոտ 8-10 տոկոսով գերազանցելով Հայաստանի գործազրկության մակարդակը: Ճիշտ է, գործազրկության համար նրանց տրամադրվող նպաստը ամսական 450 եվրո է, իսկ Հայաստանում մոտ 10 անգամ դրանից ցածր: Այդուհանդերձ, արված համեմատությամբ նկատի ունենք շեշտել, որ հասկապես հետճգնաժամային տարիներին զբաղվածության խնդիրը սրված է նաեւ զարգացած երկրներում՝ ԱՄՆ-ից մինչեւ Եվրոմիության երկրներ, եւ Հայաստանից մեկնել այդ երկրներում «բախտ որոնելու»՝ հաստատապես չարժե:

Ի՞նչ է ձեռնարկում գործազրկության հաղթահարման ուղղությամբ Հայաստանի կառավարությունը: Կառավարության վերջին նիստերից մեկում վարչապետ Տիգրան Սարգսյանը, նկատի ունենալով մի կողմից թափուր աշխատատեղերի, մյուս կողմից՝ գործազրկության առկայությունը, անհրաժեշտ համարեց օպտիմալացման ծրագրեր մշակելը գոնե պետական համակարգում:

Նոր աշխատատեղեր ստեղծվելու են տնտեսական աճին զուգահեռ եւ մասնավորապես արդյունաբերության զարգացման ռազմավարության իրականացման դեպքում: Բացի դրանից, կառավարության կողմից նպատակային քայլեր են ձեռնարկում խթանելու նոր աշխատատեղերի ստեղծումը: Մասնավորապես, այդպիսի քայլ է հարկային արտոնությունների սահմանումը արտադրական գործունեության ծավալող այն ընկերությունների համար, որոնք ստեղծում են նոր աշխատատեղեր: Նման քայլ մինչ այժմ չի կիրառվել: Այն պարունակում է որոշակի ռիսկ, կապված գործատուների կողմից այս հարցում չարաշահումների հնարավորությամբ: Դա բացառելու համար հարկ է հստակ պահանջներ եւ մոտեցումներ սահմանել:

Ընդհանրապես, 2012-2025 հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով, Հայաստանի կառավարությունը պարտավորվել է այս տարի գործազրկությունը իջեցնել մինչեւ 16,6 տոկոսի, 2017-ին հասցնել 15 տոկոսի, իսկ 2025-ին՝ 9,8 տոկոսի:

Վերոնշյալ նպատակները իրատեսական են, բայց գործազրկության ցուցանիշների նվազեցմանը զուգահեռ, մշտապես հարկ է ուշադրության կենտրոնում պահել Հայաստանում աշխատավարձերի առաջանցիկ բարձրացման հարցը: Մեր երկիրը դեռեւս մնում է ամենացածր եկամուտներ եւ ամենաբարձր գներ ունեցող երկրների թվում: Այդ համամասնությամբ է բացատրվում սոցիալական մեծ բեւեռվածությունը, հետեւաբար համալիր մոտեցում է անհրաժեշտ այս հարցին լուծում տալու համար:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**



# Ռազմիկ Փանոսյանի ստամբուլյան այցի տպավորությունները



**«Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության հայկական բաժանմունքի տնօրեն Ռազմիկ Փանոսյանը, որը մարտ-ապրիլին իր առաջին շրջայցն էր կատարում սփյուռքահայ համայնքներ, այդ թվում եղավ նաեւ Հայաստանում, ապրիլի կեսերին այցելել է Պոլիս եւ տեղի հայ համայնքի հետ ունեցած տարբեր հանդիպումների տպավորությունները մեկնելուց առաջ հայտնել «Ժամանակ» օրաթերթի խմբագրատանը: Ընդհանուր դրական տպավորություններ Ռ. Փանոսյանը ստացել է Պոլսո հայոց պատրիարքարանից եւ Ս. Փրկիչ ազգային հիվանդանոցից, այցելել է առողջապահական այդ համալիրի տարածքում գտնվող Գյուլբենկյան գերդաստանի անդամների շիրիմին, հարգանքի տուրք մատուցել:**

**Իր այցելության կարճ ժամկետում նա հասցրել է այցելել մեկ դպրոց, խոստանալով հաջորդ այցին, ամենայն հավանականությամբ առաջիկա աշնանը, լրացնել այդ բացը: Պոլսահայ համայնքի բնականոն կյանքի ակտիվ ռիթմի համար կարեւոր է նկատել հայերենով ամենօրյա մամուլի գոյությունը: Միաժամանակ մտահոգություն է հայտնել վարժարանների գործունեության ընդհանուր վիճակի առիթով՝ մայրենի լեզվին վերաբերող. ոչ վաղ անցյալում եթե արեւմտահայերենը Պոլսի, Լիբանանի, Հալեպի ամենօրյա գործածական լեզուն էր, ապա հետզհետե դադարում էր այդպիսին լինելուց, մանավանդ ներկայիս հալեպահայության տագնապը ավելի խորացնում է երեւույթը: Լեզվական այս ճգնաժամի դեմ պայքարելու անհրաժեշտությունը իր կողմից դիտվել է առաջնային:**

**Ռազմիկ Փանոսյանը համայնքային կյանքին առնչվող երեւույթներից բացի, ծանոթացել է նաեւ հայ-թուրքական հարաբերությունների ուղղությամբ տարվող աշխատանքներին. տարբեր կազմակերպությունների եւ անհատների հետ ունեցած հանդիպումներն անցել են հուսադրող մթնոլորտում: Նա ասել է, որ «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկությունը Թուրքիայում աշխատանքներ կտանի ի նպաստ եւ հաջակցություն հայ-թուրքական երկխոսության ծրագրերի: Խորապես տպավորվել է՝ մասնակցելով Ստամբուլում Ապրիլի 24-ի ոգեկոչման արարողություններին:**

**Իր դիտարկումներով սփյուռքի մեր համայնքները պոլսահայ իրականությանը քիչ են ծանոթ. «Իրականութեան մէջ սփիւռքը պէտք է անմիջականօրէն տեղեակ ըլլայ պոլսահայ կեանքին, առարկայականօրէն: Պէտք է լաւ հետեւիլ համայնքի յարաբերութիւններուն պետութեան հետ, թէ՛ դրական եւ թէ՛ ժխտական երեւակներուն: Համայնքը այսօր ունի իր մէջ պակասաւոր ձայներ: Ծանօթացման առումով լուրջ դեր կը վիճակի մամուլին: Իսկ այդ որակաւոր ձայները, որոնք կը հնչեն յառաջապահ շրջանակներու կողմէ, յատկանշական են նաեւ հայ-թուրքական երկխօսութեան տեսակէտէ», ասել է նա:**

**Ստամբուլից հետո Ռազմիկ Փանոսյանը մեկնել է Մ. Նահանգներ՝ եզրափակելով իր առաջին շրջագայությունը, եւ ստացած տպավորություններն ամփոփելուց հետո, ինչպես գրում է «Ժամանակ» օրաթերթը, ամռանը կմշակվի ծրագիր՝ համապատասխան բյուջեով, որից հետո կհաջորդեն նոր շրջանի գործնական կարգադրությունները: Պոլսին վերաբերող աշխատանքները կտարվեն երկու ուղղություններով՝ թուրքահայ համայնքի հիմնահարցերի եւ հայ-թուրքական երկխոսության: «Չեմ հաւատար, որ մենք պէտք է ըլլանք թելադրողի դերակատարութեան մէջ: Մենք միշտ պատրաստակամ պիտի ըլլանք մեր մշակելիք ծրագիրերէն բխած առաջարկութիւններուն շուրջ քննարկումներ ծաւալելու, մեր աշխատանքը առողջ հիմքի մը վրայ յառաջ տանելու առաջադրութեամբ», ասել է Ռազմիկ Փանոսյանը:**

**Մ. ԲԱԴԱԼՅԱՆ**

# Գործարքների քանակն անշարժ գույքի շուկայում ավելանում է

*1-ին էջից*

Մարզերում, բացառությամբ Երեւանի, մարտին վաճառվել են 349 բնակարաններ, որոնց քանակը փետրվարի համեմատ նվազել է 13 տոկոսով, իսկ 2012-ի մարտի համեմատ աճել՝ 7,4 տոկոսով: Գներն այստեղ մարտին աճել են 0,5 տոկոսով:

Երեւանից հետո ամենաթանկ բնակարանները մարտին եղել են Ծաղկաձորում, որտեղ 1 քմ մակերեսի շուկայական գինը կազմել է 292 հազար դրամ: Աբովյանում եւ Վաղարշապատում (Էջմիածնում) 1 քմ գինը 154 հազար հազար դրամ է կազմել, Նոր Հաճընում՝ 128 հազար դրամ, Արմավիրում՝ 121 հաար դրամ, Եղեգնաձորում՝ 120 հազար դրամ, Գորիսում՝ 119 հազար դրամ, Իջեւանում՝ 118 հազար դրամ 1 քմ դիմաց ցուցանիշներով:

2013-ի մարտին Հայաստանում գրանցվել է անհատական տների առքուվաճառքի 394 գործարք, որից 105-ը՝ Երեւանում: Մայրաքաղաքում անհատական տների առքուվաճառքի գործարքների քանակը 2013-ի փետրվարի համեմատ աճել է 1 տոկոսով, իսկ մարզերում նվազել՝ 2 տոկոսով: 2012-ի մարտի համեմատ անհատական բնակելի տների առքուվաճառքի գործարքների քանակը Երեւանում մնացել է անփոփոխ, իսկ մարզերում միասին վերցրած նվազել՝ 4,6 տոկոսով: Միջինացված՝ 250 քմ շինության մակերես եւ 400 քմ տնամերձ ունեցող անհատական տների 1 քմ-ի միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2012-ի մարտին փետրվարի համեմատ աճել են 0,6 տոկոսով: Ըստ Երեւանի վարչական շրջանների, գներն այսպիսին են եղել.

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | մարտ 2012 թ. | մարտ 2013 թ. | փետրվար 2012 թ. |
| Կենտրոն | 458800 | 474000 | 473000 |
| Արաբկիր | 364000 | 381150 | 379800 |
| Քանաքեռ-Զեյթուն | 274700 | 293450 | 292300 |
| Նոր Նորք | 301000 | 318400 | 315500 |
| Ավան | 249200 | 269750 | 268250 |
| Էրեբունի | 219100 | 238850 | 237000 |
| Շենգավիթ | 239000 | 253900 | 252500 |
| Դավթաշեն | 257000 | 275200 | 273200 |
| Աջափնյակ | 236000 | 249000 | 247000 |
| Մալաթիա-Սեբաստիա | 219000 | 237100 | 235600 |
| Նուբարաշեն | 144500 | 149550 | 148000 |
| Միջինը Երեւանում (բացի Նոր Նորքից) | 269300 | 285500 | 283800 |

Մարզերում միջինացված են 200 քմ շինության եւ 1000 քմ տնամերձ մակերեսով անհատական տների գները: Այստեղ միջին գները մարտին փետրվարին համեմատ աճել են 0,4 տոկոսով: Ամենաթանկ անհատական տները Երեւանից հետո Ծաղկաձորում են՝ 1 քմ-ն 305 հազար դրամ: Երկրորդը Աբովյանն է, 1 քմ-ն՝ 155 հազար դրամ, երրորդը՝ Վաղարշապատը, որտեղ 1 քմ-ն կազմել է 153 հազար դրամ: Ապա գալիս են Աշտարակը՝ 136 հազար դրամ, Գորիսը եւ Ջերմուկը՝ 130 հազար դրամ, Նոր Հաճընը՝ 129 հազար դրամ, Իջեւանը՝ 122 հազար դրամ, Բյուրեղավանը՝ 120 հազար դրամ:

Հողի շուկայում հետեւյալ պատկերն է՝ 2013-ի մարտին 2012-ի մարտի համեմատ, հողերի առքուվաճառքի գործարքների քանակն աճել է 12,2 տոկոսով, աճուրդով վաճառքներինը նվազել 28,5 տոկոսով:

2013-ի մարտին 2013-ի փետրվարի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 0,4 տոկոսով, իսկ 2012-ի մարտի համեմատ՝ 6,5 տոկոսով:

Մարտին իրականացվել են հիփոթեքային գրավադրման 159 գործարքներ, որից 114-ը՝ Երեւանում: Փետրվարի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը Երեւանում աճել է 83,9 տոկոսով, իսկ մարզերում՝ 12,5 տոկոսով: 2012-ի մարտի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը Երեւանում աճել է 3,7 անգամ, իսկ մարզերում՝ 2,5 անգամ:

Այսպիսով, անշարժ գույքի շուկայում արդեն երկրորդ ամիսն է, ինչ նկատվում է գործարքների քանակի աճ, սակայն գների զգալի փոփոխություն դեռեւս չի արձանագրվել:

# Աշխարհի ամենահայտնի հայ ջրասուզորդը

Ժամանակ առ ժամանակ եւ առիթից առիթ իմ սերունդը հիշում է աշխարհի ամենահայտնի ստորջրյա լողորդին՝ Եվրոպայի 13-ակի չեմպիոն, աշխարհի 11-ակի ռեկորդակիր, սպորտի վաստակավոր վարպետ Շավարշ Կարապետյանին: Նոր սերունդը նրա անունը չգիտե՝ երբ սկսում ես պատմել, հիշողության ինչ-որ խոր անկյունից հայտնաբերում է, թե ինչ-որ մեկը պատմել է այդ մասին:

Մեղավոր էր նաեւ այն ժամանակը, որի մեջ ապրում էինք, երբ Շավարշ Կարապետյանը քսան մարդու կյանք փրկեց, իսկ այդ մասին աշխատեցին շատ քիչ բան պատմել մարդկանց: Հիմա, տեղեկատվության ազատության մեր դարում ո՞վ կարող է հիշել, թե տեղեկատվությունն ինչպե՞ս էր զտվում կենտրոնացված կարգով եւ ինչպես էր մեկ կենտրոն որոշում՝ ո՞ր տեղեկությունը տալ հասարակությանը, իսկ ո՞րն իր կարծիքով կվնասեր խորհրդային վարքուբարքին: Սակայն Մոսկվայում ապրող Շավարշ Կարապետյանն այժմ ընդամենը վաթսուն տարեկան է (մայիսի 19-ին կլրանա նրա վաթսունամյակը), իսկ նրա հասակակից մարզիկները այսօր Հայաստանում բավական լծակների են տիրապետում, որպեսզի չմոռանային նրա անունը, եւ այն, թե ինչպես նա իր մարզական կարիերան զոհեց մարդկային կյանքեր փրկելիս:



1976 թվականի սեպտեմբերի 16-ի վաղ առավոտյան թիվ 15 տրոլեյբուսը Երեւանյան լճի մոտ կորցրեց կառավարումը, ճեղքեց լճի պաշտպանիչ բազրիքը եւ հայտնվեց մոտ 10 մետր խորություն ունեցող կեղտոտ ու սառը ջրում ու սկսեց սուզվել: 90-ից ավելի ուղեւորները հայտնվեցին փակ դռներով ու պատուհաններով սուզվող տրոլեյբուսի մահվան գոտում: Մեքենաները սկսեցին կանգնել, կանչվեցին ոստիկանությունը, շտապօգնությունը, փրկարար ծառայությունները: Սակայն մարդկանց կյանքի ու մահվան հարցը մի քանի րոպեներում էր վճռվում: Նրանց մի մասը երեւի երջանիկ աստղի տակ էր ծնվել, քանի որ բարեբեր պատահականությամբ այդ պահին մոտերքում եղբոր հետ իր ամենօրյա մարզանքն էր ավարտում ստորջրյա լողի Եվրոպայի չեմպիոն, աշխարհի ռեկորդակիր Շավարշ Կարապետյանը: Քսաներեքամյա աշխարհի չեմպիոնին անհրաժեշտ եղավ մի քանի վայրկյան, որ գնահատի իրավիճակը եւ որոշում կայացնի, մարդկանց կյանքը փրկելու համար նա ընդամենը մի քանի րոպե ուներ, ու ով նրանից լավ կարող էր իմանալ, թե քանի րոպեում կարող է վրա հասնել մահը խեղդվողի համար: Իր եղբայր Կամոյին հանձնարարելով սպասել ջրի երեսին՝ նա սուզվեց տղմոտ եւ սառը ջրի մեջ: Ոտքով կոտրելով տրոլեյբուսի պահեստային ապակին եւ վնասվելով կոտրված ապակիներով՝ նա սկսեց դուրս բերել մարդկանց եւ հանձնել եղբորն ու մյուսներին, ովքեր սկսեցին առաջին օգնություն կազմակերպել: Ցրտից կապտած եւ ցեխի մեջ արյունահոսող վնասվածքներով՝ նա հանում ու հանում էր մարդկանց, որոնցից հնարավոր եղավ փրկել միայն քսանին, եղան նաեւ դուրս բերվածներ, ում այլեւս փրկել հնարավոր չէր: Իսկ երբ տրոլեյբուսը կարողացան դուրս քաշել ջրից, այնտեղ արդեն կենդանի մարդ չկար: Սարսափելի ողբերգություն տեղի ունեցավ՝ յոթանասունից ավելի մարդ խեղդվեց այդ դժբախտ դեպքի պատճառով:

Չնայած տեղի ունեցածի ահագնությանը, ժամանակի մամուլը շատ հպանցիկ մի քանի տող գրեց կատարվածի մասին՝ դժբախտ դեպքերի մանրամասն նկարագրությունը կարող էր խաթարել սովետական իդիլիան: Տողերիս հեղինակը գուցե լրագրողական առաջին մկրտությունը ստացավ՝ տեսնելու իմաստով, քանի որ ուսանող լինելով, «Ապագա բժիշկ» թերթի լուսանկարիչ, իմ կուրսեցի Սեյրան Մալինցյանի հետ խցկվեցի բժշկական ինստիտուտի անատոմիկում եւ իմ աչքով տեսա խեղդվածներին: Ու մինչեւ հիմա խառնիխուռն պառկած, խեղդված մարդկանց պատկերը մնացել է իմ մեջ որպես առաջին փորձություն, ֆիքսել եմ հատկապես կապույտ ջինսերով, երկար սեւ մազերով այն պատանուն, որ միգուցե ուսանող էր եւ առավոտյան դասի էր շտապում, բայց պառկած էր տարբեր տարիքի խեղդվածների մեջ. ահավոր մկրտություն:

Իսկ Շավարշ Կարապետյանի սխրանքի մասին ավելի շատ բանավոր պատմությամբ եմ լսել, քան ինչ-որ տեղ կարդացել այդ օրերին: Կարդացել եմ շատ ավելի ուշ, երբ սովետական ապուշ բարքերը մի փոքր ավելի ազատական էին դարձել:

Բանավոր պատմությունները փառաբանում էին այն ժամանակ հայերիս պարծանք չեմպիոնին, օժտում հերոսական նկարագրով, մեր աչքին աննկարագրելի մի գերմարդ դարձնելով նրան: Իսկ նրա հետ պատահածի մասին իմ սերունդն իմացավ ավելի ուշ:



Նույն նկատառումներով, որով տեղեկատվությունը լայնորեն չտարվեց հանրությանը, փրկվածները նույնպես չիմացան իրենց փրկչի մասին, ու նրանցից ոչ մեկը հետագայում չայցելեց նրան (հիմա էլ ուշ չէ, եթե նրանց մեջ ողջ մնացածներ կան): Շավարշ Կարապետյանի մոտ ուժգին մրսածությունից երկկողմանի թոքաբորբ սկսվեց, կեղտոտ ջրում վարակված նրա վերքերից սպառնում էր սեպսիսը: Այնպես որ՝ նա բավական ծանր հիվանդություն տարավ, ամիսուկես պառկեց հիվանդանոցում, ու դրանից հետո միայն փորձեց վերադառնալ առօրյա մարզումներին: Անգամ աշխարհի նոր ռեկորդ սահմանեց չորս հարյուր մետր ջրալողում, սակայն միեւնույն է՝ առողջությանը հասցվել էր անդառնալի վնաս, եւ Կարապետյանը հեռացավ մեծ սպորտից: Նրան, իհարկե, պարգեւատրել էին կատարած սխրանքի համար՝ «Պատվո նշան» շքանշանով, սպորտի վաստակավոր վարպետի կոչում էին շնորհել, իսկ ՅՈՒՆԵՍԿՕ-ն նրան «Արդարացի խաղ» հազվագյուտ մրցանակ (Ֆեր փլեյ) տվեց, նա առաջին խորհրդային մարզիկն էր, որ իր պահվածքի համար պարգեւատրվեց այդ մրցանակով:

Փորձեց այլ զբաղմունք գտնել, չկոտրվել, հետո էլ ընտանիքով մեկնեց Հայաստանից ԱՄՆ: Իսկ 1993-ին գնաց Մոսկվա եւ փորձեց բիզնեսով զբաղվել, ու դա ստացվեց: Նա հիմնեց կոշիկի փոքր արտադրամաս, մի շատ խոսուն անուն էլ դրեց՝ «Երկրորդ շնչառություն»: Ազատական բարքերի հետ դուրս լողաց եւ բազմամիլիոն Ռուսաստանի սեփականությունը դարձավ նաեւ նրա սխրանքն այն բանից հետո, երբ Մոսկվա գնալուց հետո այդ մասին գրեց «Լիտերատուրնայա գազետան»: Նրա մասին գրքեր են գրվել, ֆիլմեր նկարահանվել, նրան միշտ հրավիրում են ամենատարբեր հաղորդումների, վերջերս ծնվեց նրա թոռնիկը: Այսօր նա Ռուսաստանի ստորջրյա լողի ասոցիացիայի պատվավոր նախագահն է, 2007-ին հիմնել է «Շավարշ Կարապետյան» բարեգործական հիմնադրամը, որն ամեն տարի ստորջրյա լողի մրցումներում սահմանում է «Շավարշ Կարապետյան» մրցանակ: Նրա անունով մոլորակ է կոչվել: Հիանալի ընտանիք ունի, որդի, թոռ, գնահատված եւ սիրված է Ռուսաստանում: Սակայն փաստորեն նրան այնքան էլ չեն հիշում այն երկրում, որին տվեց իր սխրանքը, որի մարդկանց փրկելիս զոհաբերեց առողջությունն ու կարիերան, այլապես ականատես կլինեինք որեւէ անգամ նրա մեծարման երեկոյի կամ անվանահիշատակումներ կլինեին:

Սակայն նա հիշաչար չէ, կապված է իր հայրենիքի հետ, իսկ մեր կարծիքով՝ երբեք ուշ չէ նրան մեծարելը:

Ի դեպ, մարդկանց օգնելն ու փրկելը նրա նկարագրի բաղկացուցիչն է, այլապես 1985 թվականին մարզահամերգային համալիրի հրդեհի ժամանակ նա առաջիններից մեկը չէր հայտնվի մարդկանց փրկողների շարքում՝ այրվածքներ ստանալով եւ էլի բավական մարդկանց փրկելով:

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# Մեծ մշակութաբանի հիշատակին

Անվանի գիտնական եւ հումանիստ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր հայտնի մշակութաբան **Էդուարդ Սարգսի Մարգարյանը** ծնվել է 1929 թ. դեկտեմբերի 24-ին Երեւանում, տոհմիկ մտավորականի ընտանիքում: Մահացել է 2011 թ. մարտի 12-ին Մոսկվայում: Թաղված է Երեւանի քաղաքային (Թոխմախի) պանթեոնում:

Է. Մարգարյանը ավելի քան կես դար աշխատել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի եւ իրավունքի ինստիտուտում՝ լինելով նրա նվիրյալներից եւ գիտության քրմերից: Այստեղ էլ նա կազմակերպել եւ երկար տարիներ ղեկավարել է (1973 թվականից) Խորհրդային Միությունում մշակույթի տեսության միակ գիտական ենթաբաժինը: Նա նաեւ «Գոյատեւման ու զարգացման ռազմավարությունների մշակմանն աջակցող միջազգային ասոցիացիայի» (ԳԶՌՄԱՄԱ, Երեւան) նախագահն էր: Համարյա նույնքան ժամանակ էլ Է. Մարգարյանը Հայաստանի յուրահատուկ գիտնական-դեսպաններից էր փիլիսոփայության, սոցիոլոգիայի եւ մշակութաբանության բնագավառում. առաջին հերթին՝ Ռուսաստանում, ապա եւ աշխարհի մյուս երկրներում:




Գիտնականի գրչին են պատկանում հայրենիքում եւ արտասահմանում ռուսերեն, անգլերեն, եւ այլ օտար լեզուներով հրատարակված հարյուրավոր գիտական հոդվածներ եւ բազմաթիվ մնայուն մենագրություններ. «Լոկալ քաղաքակրթությունների հայեցակարգի մասին» (1962), «Մշակույթի տեսության ակնարկներ»(1969), «Մարդկային գործունեության եւ մշակույթի ծագումնաբանության մասին» (1973), «Մշակույթի տեսությունը եւ ժամանակակից գիտությունը» (1983), «Մշակույթի մասին գիտությունները եւ դարաշրջանի հրամայականները» (2000), «Հայերի ցեղասպանության գլոբալ ասպեկտները» (2005), «21-րդ դարի հումանիզմը: Մարդկության ինքնապահպանման գաղափարախոսությունը» (2009) եւ այլն:

Է. Մարգարյանի անվան հետ է կապված հայկական մշակութաբանական եւ ավանդույթաբանական գիտական դպրոցի կազմավորումը, որն այսօր ունի բազմաթիվ հետեւորդներ ոչ միայն Հայաստանում, այլեւ արտասահմանում, մասնավորապես՝ Ռուսաստանում: Ավելին, այդ երկրի գիտական շրջանակներում Էդուարդ Մարգարյանը ճանաչվել է որպես «ռուսական մշակութաբանության սկզբնավորող» («Философские науки», 2000, N2, ր.17): Շնորհիվ նրա հիմնարար աշխատությունների՝ «Մշակութաբանություն» դասընթացը մտավ եւ մնայուն տեղ գրավեց հանրապետության բուհերի ուսումնական ծրագրերում, ի դեպ, առաջիններից մեկը ՀՊՏՀ-ում: Ինչպես հանրապետությունում, այդ թվում նաեւ ՀՊՏՀ փիլիսոփայության ամբիոնում լայնորեն ծավալվեցին հետաքրքրական մշակութաբանական հետազոտություններ:

Նրա մասին հոդվածներ են տեղ գտել բազմաթիվ հեղինակավոր տեղեկատուներում. «Հայկական համառոտ հանրագիտարան» գլխ. խմբագիր Հ. Մ. Այվազյան, չորս հատորով, հ.3, Եր. 1999, էջ 603-604, Хоруженко К.М. Культурология, Энциклопедический словарь. Ростов-на-Дону, 1997, с. 289-290., Алексеев П.В. Философы России 19-20-ых столетий. Биографии. Идеи. Труды, М., 2002, с. 606:




Բազում հիմնախնդիրների մշակման հարցում այնքան մեծ է եղել գիտնականի ներդրումը, որ ամերիկյան կենսագրական ինստիտուտը (ABI) Է. Մարգարյանին ներկայացրել է «Տարվա մարդը» (1998) տիտղոսին՝ նրան ներառելով «500 անվանի առաջնորդների ցուցակում», իսկ անցյալ դարի 90-ականների վերջին՝ «20-րդ հարյուրամյակի ականավոր մարդը» տիտղոսին:

Մահվանից հետո էլ Է. Մարգարյանի անունն ու գործը չեն մոռացվում: Մահվան տարելիցի առիթով ՌԴ կրթության եւ գիտության նախարարության, Հումանիտար գիտությունների ակադեմիայի՝ Մոսկվայում լույս ընծայվող «Философские науки» ամսագիրը (2012, N3, ր.143-157) «Լոկալ քաղաքակրթությունների հայեցակարգից դեպի 21-րդ դարի հումանիզմի իդեալները» վերտառությամբ ծավալուն բաժին է նվիրել նրա հիշատակին ու գաղափարներին: Իսկ վերջերս, ըստ էության մահվան երկրորդ տարելիցի օրերին, Երեւանի քաղաքապետարանի որոշմամբ, Տերյան փողոցի նշանավոր 62 տան պատին, որտեղ երկար տարիներ ապրել է պրոֆեսորը, տեղադրվել է գեղեցիկ, ճաշակով ձեւավորված գրանիտե հուշատախտակ (ճարտարապետ՝ Արբակ Վարդանյան), հավերժացումը արժանավոր երեւանցու հիշատակի, որի պաշտոնական բացումը տեղի ունեցավ օրեր առաջ:

Պրոֆեսորը թողել է յուրահատուկ «հոգեւոր կտակ», որի համաձայն իր աշխատությունները, գիտական գաղափարներն ու ծրագրերը, գիտակարգերն ու հայեցակարգերը հայ ժողովրդի մտավոր սեփականությունն են, եւ ստեղծվել են, առաջին հերթին, բարձրացնելու Հայաստանի հեղինակությունը միջազգային ասպարեզում, հատկապես եթե դրանք ընկալվեն, գործադրվեն ու տարածվեն նաեւ պետական մակարդակով:

**ՍԱՐԳԻՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
**Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ**

# Ըստ «Վաշինգտոն փոստի» Օբաման պատրաստ է զինել սիրիական ընդդիմությանը

ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման երեկ մամլո ասուլիսում հայտարարել է, որ առկա են տվյալներ Սիրիայի քաղաքացիական պատերազմի ընթացքում քիմիական զենքի կիրառման վերաբերյալ: Ընդսմին նա նշել է, որ առայժմ հայտնի չէ, թե այդ զենքը երբ եւ ինչպիսի հանգամանքներում է կիրառվել: Այդ հանգամանքները դեռ պետք է բացահայտվեն:

Նախագահի աշխատակազմի պաշտոնյաներից ոմանք CNN հեռուստաալիքի եթերում հայտարարել են, որ անցյալում Օբաման մերժում էր Սիրիայում ԱՄՆ-ի ռազմական միջամտության հնարավորությունը, բայց հիմա արդեն քննարկում է Սիրիայի խնդրի լուծման բոլոր տարբերակները:

«Վաշինգտոն փոստ» թերթը նույնիսկ պնդում է, թե նախագահ Օբաման պատրաստ է սկսել սպառազինության մատակարարումները սիրիական ընդդիմությանը: Հեղինակավոր հրատարակության խմբագրակազմի գնահատումների համաձայն, Օբաման տվյալ հարցի առթիվ որոշում կընդունի ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ հունիսին կայանալիք հանդիպումից առաջ: Սպիտակ տունը կփորձի Կրեմլին համոզել, որ Ասադի վարչակարգի դեմ անհրաժեշտ է ավելի կոշտ միջոցներ ձեռնարկել քիմիական զենքի կիրառություն թույլ չտալու համար: Այդ նպատակով շուտով Մոսկվա կմեկնի ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրին:



Թերթը չի մանրամասնում, թե ԱՄՆ-ը կոնկրետ ինչ զինատեսակ է պատրաստ մատակարարել սիրիական ընդդիմությանը, սակայն նշում է, որ Ասադի վարչակարգի հակառակորդները կուզենային ստանալ հակատանկային զենքեր եւ «երկիր-օդ» դասի հրթիռներ, որոնք պետք է օգտագործվեն բանակային օդանավերի եւ ուղղաթիռների դեմ:

Իսրայելում միանշանակ չեն վերաբերվում Արեւմուտքից սիրիական ընդդիմության հնարավոր զինամատակարարմանը, քանի որ Սիրիայում ընդդիմադիր զինված ուժերի կառուցվածքը տարասեռ է, եւ այնտեղ ավելի ու ավելի մեծ ազդեցություն են ձեռք բերում «Ալ Ղաիդայի» հետ կապված իսլամիստները:

Դեռ 2013-ի մարտին գերմանական «Շպիգել» հանդեսը գրել էր, որ վերջին ամիսներին Հորդանանի տարածքում ամերիկացի հրահանգիչները սիրիական ընդդիմության գրոհային մարտիկներին սովորեցնում են տանկերի դեմ պայքարելու արդիական մեթոդներ: Տվյալ աղբյուրի համաձայն, մոտ 200 սիրիացի ապստամբներ արդեն նմանօրինակ զինվորական պատրաստություն են անցել: Այն ժամանակ նաեւ հաղորդվել էր, որ առաջիկա մեկուկես ամսվա ընթացքում «Սիրիայի ազատ բանակի» 600 մարտիկներ նույնպիսի պատրաստություն կանցնեն երկու հատուկ ճամբարներում: Պաշտոնական Վաշինգտոնը չէր մեկնաբանել այդ հրապարակումը:

# «Համասը» սալաֆիստների շուրջկալ է կազմակերպել

Պաղեստինյան «Համաս» արմատական շարժման անվտանգության մարմինները Գազայի հատվածում երեկ սալաֆիստ ծայրահեղականների շուրջկալ են կազմակերպել, հաղորդում է Threat Matrix կայքէջը: Վերջինիս տվյալների համաձայն, գործողության ընթացքում ձերբակալվել են «Ժողովրդական դիմադրության կոմիտեների» եւ «Նասեր Սալահուդդինի բրիգադների» երկու ակտիվիստներ: Այդ կազմակերպությունները «Համասից» շատ ավելի արմատական են:

Սալաֆիստները նշում են, որ «Համաս» շարժումը իրենց ձերբակալված զինակիցներին հաճախ հանձնում է Եգիպտոսին, որտեղ նրանցով զբաղվում են հատուկ ծառայությունները: Եգիպտացիները փորձում են պարզել Սինա թերակղզում եւ Գազայի հատվածում գործող սալաֆիստական կազմակերպությունների կառուցվածքը:



Կայքէջը հավելում է, որ ձերբակալությունները ժամանակի առումով գրեթե համընկել են Իսրայելի օդային հարվածին, որի հետեւանքով սպանվեց իսրայելական Էյլաթ քաղաքի հրթիռակոծումն իրականացրած սալաֆիստ գրոհայիններից մեկը: Իսրայելցիների կարծիքով, հրթիռակոծությունը կազմակերպել էին ոչ թե «Համասի» գրոհայինները, այլ Սինա թերակղզում հիմնավորված գերարմատական իսլամիստները: Օդուժի հարվածից սպանված ծայրահեղականը համակարգում էր նրանց գործողությունները Գազայի հատվածի սալաֆիստների հետ:

Վերջին տարիներին «Համաս» շարժման եւ սալաֆիստների փոխհարաբերությունները հետզհետե վատանում են: Երկու քաղաքական ուժերը հավակնում են ստանալ գրեթե միեւնույն անձանց աջակցությունը, եւ այս կապակցությամբ տվյալ ուժերի միջեւ սուր մրցակցություն է ծավալվել Գազայի հատվածում: Մոտավորապես նույն ձեւի հարաբերություններ են հաստատվել Եգիպտոսում կառավարող «Մուսուլման եղբայրներ» շարժման եւ արմատական իսլամիստների միջեւ:

Թե՛ Գազայի հատվածում եւ թե Եգիպտոսում սալաֆիստները պաշտոնապես արգելքի տակ են, սակայն նրանց հանդեպ իշխանությունների վերաբերմունքը շատ զգուշավոր է. այդ շարժման բազմաթիվ ներկայացուցիչներ հետախուզման մեջ են կամ բանտարկված են:

Վերջին շաբաթներին «Համաս» շարժման համար լուրջ գլխացավանք են դարձել Իսրայելի տարածքի «չարտոնված» հրթիռակոծումները արմատական իսլամիստների կողմից: Այդ գործողությունները ձախողման սպառնալիք են ստեղծում անցյալ տարեվերջին «Համասի» եւ Իսրայելի կնքած զինադադարի համար:

ՆՎԱՃՈՂԱԿԱՆ

# Թուրքիան ընդլայնում է իր ազդեցությունը Եվրոպայում

***Թուրքիան Բալկանները նվաճեց հինգ դար առաջ: Այժմ նա փորձում է իր ազդեցությունը Եվրոպայում ընդլայնել ավելի խաղաղ միջոցներով: Բոսնիայի մայրաքաղաք Սարաեւոյում Թուրքիան վերջին տարիներին բացել է երկու համալսարան, թուրք ուսանողների մեծ հոսք է այդ երկիրը թափանցել, գրում է Մայքլ Բըռնբաումը «Վաշինգտոն փոստ» եւ «Ինդիփենդենտ» թերթերում: Ստորեւ՝ այդ հոդվածի ամփոփ թարգմանությունը ապրիլի 13-ի համարից:***

**Թուրքական ներդրումները ավելացրել են նույնիսկ Խորվաթիայում եւ Սերբիայում: Թուրքական ներկայությունը Բալկաններում ավելի քան 40 տարի «քնած է եղել», որովհետեւ կոմունիստական Հարավսլավիայում թուրքերն այդքան էլ «սպասված հյուր չէին»: Բայց 1990-ականների կեսերից, երբ երկիրը տարանջատվեց, ամեն ինչ փոխվեց: Թուրքերն սկսեցին իրենց միջոցներով վերականգնել օսմանյան շրջանից մնացած հուշարձանները:**

**Այժմ թուրքական ներկայությունը մեծապես զգալի է: Թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ հաճախ են այցելում Սարաեւո: Կառուցվում է մի նոր, մեծ դեսպանատուն: Ցուցատախտակներում գովազդվում են դեպի Ստամբուլ եւ հետ թռիչքներ՝ ընդամենը 75 դոլարով: Նույնիսկ մի սերիալ է ցուցադրվում 16-րդ դարի Օսմանյան կայսրության մի կառավարչի մասին: Սակայն ամենաազդեցիկ շինությունները համալսարաններն են, որոնցից Սարաեւոյի միջազգային համալսարան մուտք գործելիս ուսանողները պետք է անցնեն սուլթան Մեհմեդ նվաճողի «աչալուրջ աչքերի» տակով: Մասնավոր համալսարանը հովանավորում են թուրք գործարարներ, որոնք վարչապետ Էրդողանի կուսակցության համակիրներն են: Համալսարանը սկսել է գործել 2004 թվից եւ այժմ 1500 ուսանող ունի: Նոր շենքի կառուցումից հետո այդ թիվը նախատեսվում է հասցնել 5000-ի: Դասավանդումը անգլերեն լեզվով է: «Թուրքերն այստեղ գալիս են, որովհետեւ հավատացած են, որ Բոսնիան Թուրքիայից առաջ կդառնա Եվրոմիության անդամ», նշել է ռեկտորի տեղակալ Մուհամեդ Հաջիաբդիչը:**

**Սարաեւոյում մյուս թուրքական կրթօջախը «Բըրչ միջազգային համալսարանն» է, բացված 2008-ին, որը կապ ունի թուրք ազդեցիկ քարոզիչ Ֆեթհուլլահ Գյուլենի հետ, ով Փենսիլվանիայից կրոնական եւ կրթական ծրագրեր է ղեկավարում:**

**Այդ տարածաշրջան Թուրքիայի ներխուժումը անհանգստացնում է որոշ արեւմտյան երկրների (հատկապես Գերմանիային), որոնք զգուշանում են աշխատանքի տեղավորվելու մտադրությամբ թուրքերի մեծ հոսքից դեպի Եվրոպա:**

**Թուրքիայի հեշտհետե աճող ներկայությունը անհանգստացնում է Բոսնիայի սերբերին, որոնք զուգահեռ կառավարում են Բոսնիան, 1995-ին ստորագրված խաղաղության համաձայնության հասկացիչներով: Նրանք բողոքում են, որ երկրի մահմեդական հատվածը նախկին կայսերական իշխանության ազդեցության տակ է ընկնում:**

**Սակայն Սերբիան եւ Խորվաթիան սիրով ընդունում են թուրքական ներդրումները: 2012-ին Թուրքիան 3-րդ ամենամեծ ներդնողն էր Խորվաթիայում, իսկ Էրդողանը սերտ կապեր է արդեն հաստատել իր երբեմնի հակառակորդ Սերբիայի հետ: Թուրք դիվանագետները բանակցություններ են վարում կառավարության ինչպես բոսնիացի, այնպես էլ սերբ անդամների հետ:**

**Բալկաններում Թուրքիայի գործադրած ջանքերը նպաստել են նաեւ նրա տնտեսության աճին:**

**«Եվրոպան նվաճելու նրանց ուղին միշտ Բալկանների տարածքով է անցել», նշել է Թուրքիայում Բոսնիայի նախկին դեսպան Հայրուդդին Սոմունը:**

**Հ. Ծ.**

# Դիարբեքիր է այցելել Իսրայելում բնակվող քրդական հրեաների պատվիրակությունը

**Ապրիլի 30-ի համարում այդ մասին նշել է Odatv.com կայքէջը: Տեղեկության համաձայն, նույն օրը Դիարբեքիր այցելող քրդական հրեաների պատվիրակությունը, որը գլխավորում է Երուսաղեմի մոտակայքի Մեվասսերեթ Ցիոն ավանի կառավարիչ Արիե Շամամը, հանդիպել է Սուր շրջանի քաղաքապետ Աբդուլլահ Դեմիրբաշին: Պատվիրակության կազմում են Շամամի տեղակալ Հավիվ Լեւին եւ ավանի կրթության ու սպորտի վարչության պետ Յաիր Ռոմախը:**

**Թուրքական կայքէջը նշում է, որ Մեվասսերեթ Ցիոնը 28 հազար բնակչությամբ ավան է, սակայն ունի հնագույն պատմություն, քանի որ նշվում է Հին Կտակարանում: Պատվիրակությունը Թուրքիա է անցել Հյուսիսային Իրաքի Քրդստան շրջանից, եւ ավանում բնակվում է շուրջ 7000 քրդական հրեա: Այս հրեաները, որոնց, ըստ կայքէջի, կոչում են «Քուրդիստանի հրեաներ», Մեվասսերեթ Ցիոն են տեղափոխվել Հյուսիսային Իրաքից դեռեւս Իսրայելի կազմավորման օրերին:**

**Հիշեցման կարգով նշենք, որ քրդական հրեա էր, այլ ոչ թե քուրդ, պանթուրքիզմի հիմնադիր Զիա Գյոքալփը, որին Հայոց ցեղասպանության ծրագրմանը, կազմակերպմանն ու իրագործմանը մասնակցելու համար 1919-ին դատապարտել էր օսմանյան ռազմական ատյանը, իսկ 1920-ին անգլիական ռազմածովային ուժերի հրամանատարությունը օկուպացված Ստամբուլից նույն մեղադրանքով աքսորել էր Մալթա:**

**Հ. Չ.**

# Չինացիներն ամենից շատ են ճամփորդում

**Աշխարհում ամենից շատ ճանապարհորդում են չինացիները: Այս հետեւությանն է հանգել ՉԺՀ զբոսաշրջության ակադեմիան: Անցյալ տարի ՉԺՀ քաղաքացիները արտերկրում ավելի քան 80 մլն ուղեւորություն են կատարել, առաջ անցնելով ամերիկացիներից եւ գերմանացիներից:**

**Չինաստանը գլխավոր ներդնողներից մեկն է: Աշխարհի տարբեր կողմերում՝ Եվրոպայում, Հարավարեւելյան Ասիայում եւ այլուր շատանում են չինացի հյուրերը: Զբոսաշրջության ասպարեզում 2005-ին Չինաստանը 7-րդ տեղում էր, 2011-ին՝ 3-րդ տեղում: Վերջին մեկ տարում չին զբոսաշրջիկների թիվն ավելացել է 20 տոկոսով: Դա պայմանավորված է երկրի տնտեսության վերելքով եւ բնակչության եկամուտների աճով:**

**Չինաստանը զբոսաշրջիկների համար գրավչության առումով 3-րդ տեղում է Ֆրանսիայից եւ ԱՄՆ-ից հետո:**

**Պ. Ք.**

ԱԶԳ



ԴԱՍԱԽՈՍ-ՈՒՍԱՆՈՂ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՊ

# Լավ ավանդույթ Գեղակադեմիայում



Երևանի Գեղարվեստի Պետական Ակադեմիա (YSAFA)

Գեղարվեստի ակադեմիայի ուսանողների հետ երեկվա ցուցահանդեսային հանդիպումը գրաֆիկայի եւ գծանկարի ամբիոնի դասախոսների աշխատանքների հետ էր: Այսպիսի ցուցահանդեսները ակադեմիայում լավ ավանդույթ են ձեւավորում: Որեւէ արվեստագետ իր ստեղծագործությունը հանրայնացնելու, ճանաչելի դարձնելու ձգտում անշուշտ ունի. նկար է, գիրք, թե երաժշտական գործ, իր երկրորդ կյանքը շարունակելու համար երկխոսության, շփման անհրաժեշտություն ունի:

Գեղակադեմիայի նկարիչ-դասախոսների համար բուհի «Ալբերտ եւ Թովե Բոյաջյան» ցուցասրահը դրա լավագույն հնարավորությունն է: Լավ մանկավարժ-դասախոսը, որ նաեւ լավ նկարիչ լինի, ինչպես գեղանկարչության ֆակուլտետի դեկան **Էդվարդ Վարդանյանն** է նկատում, շատ չի պատահում, եւ ուսանողի համար կարեւոր է նաեւ դասավանդող մանկավարժի ստեղծագործական անհատական նկարագիրը: «Դասախոսներն ահա գրքի պես բաց են՝ պատրաստ լսելու ձեր վերաբերմունքը, առողջ դատողությունը կամ քննադատությունը», ասում է Էդ. Վարդանյանը եւ հույս ունի, որ նման ցուցահանդեսները կդառնան ամենամյա եւ բոլոր ամբիոնները կընդգրկվեն ուսանող-դասախոս երկխոսության, զրույցի այս ձեւում: Գրաֆիկայի եւ գծանկարի ամբիոնի վարիչ **Արա Բաղդասարյանի** համար սա դասախոս-մանկավարժ-նկարչի ստեղծագործական միջավայրը ուսանողին ճանաչելի դարձնելու լավ հնարավորություն է, որտեղ յուրաքանչյուրն իր համար կարեւոր մի բան կգտնի կամ կվերցնի՝ որպես օրինակ կամ փորձ:

Գեղակադեմիայի ռեկտոր **Արամ Իսաբեկյանը** ցուցահանդեսային նման հանդիպումները ուսանողների հետ դարձնում է շփման անմիջական միջավայր, ուսումնական պրոցեսի, հերթական դասի շարունակություն՝ այն տարբերությամբ, որ այստեղ ուսանողը կարող է ճանաչել դասախոսին նաեւ որպես նկարիչ-արվեստագետ՝ յուրաքանչյուրին իր անհատական ձեռագրով, գեղանկարչական մտածողությամբ:

Ցուցադրությանը Աշոտ Հարությունյանը ներկայացել էր հայ եկեղեցիների, վանքերի («Նորավանք», «Տաթեւ») գրաֆիկական շարքով, Արա Բաղդասարյանը՝ ջրաներկ բնանկար գործերով, նաեւ Տիգրանուհի Աղասյանը, Համլետ Ասատրյանը, Հայկ Աղաբեկյանը եւ ուրիշներ:

Ս. Բ.

# Կմեկնարկի «Արտ-ֆեստ» փառատոնը

Մայիսի 13-19 կմեկնարկի «Արտֆեստ» առաջին հանրապետական երիտասարդական բաց փառատոնը՝ «Մեկ տանիքի ներքո» խորագրով: Փառատոնն ընդգրկում է արվեստի մի քանի ոլորտ միաժամանակ՝ թատերական արվեստ, կինոարվեստ, կերպարվեստ (գեղանկարչություն, քանդակագործություն, գրաֆիկա, լուսանկարչություն): Փառատոնի նպատակն է աշխուժացնել մայրաքաղաք-մարզեր երիտասարդական ստեղծագործական մթնոլորտը, ընդլայնել համագործակցության շրջանակը, փորձի փոխանակման արդյունքում կատարելագործել երիտասարդ արվեստագետների մասնագիտական հմտությունները, ճշտել ստեղծագործական ձեռքբերումներն ու բացահայտել նոր անուններ: Փառատոնին 170-ից ավելի հայտատուներ են եղել, սակայն ընտրվել է շուրջ 130 մասնակից: Ստեղծագործությունների ցուցադրություններից հետո, մասնագիտական հանձնախումբը կորոշի մրցանակակիրներին եւ լավագույնը ճանաչված ստեղծագործությունները կցուցադրվեն նաեւ մարզերում:

Փառատոնի նախագահ Էրիկ Բարսեղյանն «**Ազգի**» հետ զրույցում ընդգծեց, որ մեր իրականության մեջ առաջին անգամ է, որ մի փառատոն ընդգրկում է արվեստի վեց ոլորտ: Այս փառատոնի գաղափարը բոլորին ոգեւորել է: Նա ավելացրեց, որ «Արտ-ֆեստ» փառատոնին կարող են մասնակցել ստեղծագործողներ Հայաստանի տարբեր մարզերից եւ փառատոնի նպատակն է նաեւ ակտիվացնել Երեւան-մարզեր կապը, ինչպես նաեւ բացահայտել ստեղծագործող մարդկանց: «Փորձում ենք կոտրել ստեղծագործական այն անջրպետը, որը տարիներ շարունակ մարզերի եւ Երեւանի մեջ եղել է», ասաց նա:

«Արտ-ֆեստն» առաջին երիտասարդական հանրապետական բաց փառատոնը հետաքրքրական բացում է խոստանում՝ պատրաստվելով մեծ ֆլեշմոբի, որի մասնակցելու համար պարտադիր չէ պարային կրթություն ունենալ:

Նշենք, որ ֆլեշմոբը կլինի մայիսի 13 -ին, ժամը 18-ին, Հյուսիսային պողոտայում:

Մասնագիտական հանձնախումբ՝ Ռաֆայել Քոթանջյան, Վիգեն Չալդրանյան, Դավիթ Մինասյան, Ժիրայր Դադասյան, Անետա Երզնկյան, Դավիթ Մուրադյան, Աննա Հեքեքյան, Դավիթ Գալստյան, Գարեգին Գրիգորյան, Աշոտ Համբարձումյան, Հրաչյա Ղազարյան, Ռուդոլֆ Վաթինյան, Հայկ Օրդյան, Սամվել Սեւադա, Ռուբեն Դանիելյան: Փառատոնի գեղարվեստական խորհրդատուն է Արմեն Մազմանյանը:

Փառատոնին ակտիվ մասնակցություն են ցուցաբերել ԵՊՀ-ն, ՀՊՄՀ-ն, ԵԹԿՊԻ մարզային մասնաճյուղերը, Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջը, Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիան,Գեղեցիկ արվեստների ազգային ակադեմիան:

Նշենք, որ փառատոնին կարող են մասնակցել 16-35 տարիքի ստեղծագործողներ: Բոլոր մասնակիցներին կտրվեն մասնակցության դիպլոմներ, սակայն կլինեն նաեւ ոսկե, արծաթե, բրոնզե մրցանակներ:

Բոլոր ցուցադրությունների մուտքն անվճար է:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

## Լուրեր Հայկական պետական մանկավարժական համալսարանից

# Նոր ցուցադրություն

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ գիտական գրադարանի հումանիտար գրականության ընթերցասրահում բացվել է ՀՊՄՀ ֆիզիկայի եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ֆիզիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Աշոտ Բաբախանյանի «ՀԻՆ-ՆՈՐ ԵՐԵՎԱՆ» ծրարների ցուցահանդեսը: Հեղինակի հավաքածուն հարուստ է ու ներկա ցուցադրությունը դրա ընդամենը մի փոքրիկ մասն է եւ ներկայացնում է խորհրդային տարիներին «ԽՍՀՄ փոստ» գործակալության կողմից պատրաստված ծրարներ, որոնց վրա կան Երեւան մայրաքաղաքի տարբեր կառույցներ ներկայացնող պատկերներ:

Ծրարների առաջին շարքում պատկերված են Երեւանի հպարտությունը հանդիսացող շինությունները: Այստեղ պատկերված են ՀԽՍՀ կառավարության շենքը, ՀԿԿ կենտկոմի շենքը (ներկայում՝ ՀՀ Ազգային ժողովի շենքը), Գիտությունների ակադեմիայի շենքը, «Զվարթնոց» օդանավակայանը, Մատենադարանի շենքը, Թումանյան փողոցը, «Մոսկվա» կինոթատրոնի շենքը, Արտասահմանյան երկրների հետ բարեկամության եւ կուլտուրական կապերի հայկական ընկերության շենքը, «Արմենիա», «Դվին», «Հրազդան», «Սեւան» հյուրանոցների շենքերը, Հրազդանի կամուրջը, Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի պետական ակադեմիական թատրոնի շենքը, Գաբրիել Սունդուկյանի անվան պետական ակադեմիական դրամատիկական թատրոնի շենքը, Երեւանի շախմատի կենտրոնական տան շենքը, «Էրեբունի» թանգարանի շենքը, Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանը, Շահումյան հրապարակը: Ծրարների երկրորդ շարքում պատկերված են Երեւանի հուշարձանները: Ներկայացված են «Սասունցի Դավիթ», «Մայր Հայաստան», «Սայաթ-Նովա», «Կոմիտաս» արձանների լուսանկարները: Ցուցահանդեսը թույլ է տալիս պատկերացում կազմելու խորհրդային նամականիշային մոտեցումների մասին:




## «Վերելք Արարատ» գրքի շնորհանդեսը

2013 թվականի ապրիլի 23-ին Արթիկ քաղաքի քաղաքապետարանի եւ քաղաքային գրադարանի նախաձեռնությամբ քաղաքային մշակույթի տանը տեղի ունեցավ ծննդով արթիկցի, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի սոցիալ-տնտեսական աշխարհագրության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Աշոտ Աջամօղլյանի «Վերելք Արարատ» գրքի շնորհանդեսը, որին մասնակցում էին քաղաքի եւ տարածաշրջանի դպրոցների տնօրեններ, ուսուցիչներ, մտավորականներ:

Բացման խոսք ասաց քաղաքային գրադարանի տնօրեն Օլգա Նահապետյանը: Գրքի բովանդակությունը ներկայացրեցին քաղաքի թիվ 1 դպրոցի աշխարհագրության ուսուցչուհի Մարիամ Միքայելյանը եւ թիվ 5 դպրոցի աշխարհագրության ուսուցչուհի Լուսինե Խաչատրյանը: Գրքի մասին խոսեցին, արժեւորեցին քաղաքապետի տեղակալ Գեւորգ Ղուլիջօղլյանը, քաղաքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության հարցերի բաժնի պետ Համլետ Գասպարյանը, ՀԽՍՀ վաստակավոր ուսուցիչ Արփիկ Մանանդյանը, Շիրակի մարզային գրադարանի տնօրեն Գեւորգ Ամիրյանը: Գրքի խմբագիր Տիգրան Պետրոսյանցն իր խոսքում նշեց. «Աշոտ Աջամօղլյանը Արթիկի զավակ է եւ այս շնորհանդեսը նաեւ հաշվետվություն է իր հարազատ ծննդավայրին, իր ուսուցիչներին ու համաքաղաքացիներին: «Վերելք Արարատ» գիրքը ուղիղ 200 տարվա պատմություն է ընդգրկում եւ ներկայացնում է 1701-1902 թվականներին Հայոց Սուրբ լեռան՝ Արարատի 20 վերելքների պատմությունը: Գիրքը եւ գիտական, եւ հանրամատչելի տարրերի հանրագումար է եւ սեղանի գիրք պատմության, աշխարհագրության, գրականության ուսուցիչների համար: Հեղինակը շուրջ 10 տարի պրպտել է, ծանոթացել բազում աղբյուրների, նորովի թարգմանել է տվել մի քանի հեղինակների տեղեկությունները եւ սեղանին դրել այս ավարտուն աշխատանքը»:

Տ. Պետրոսյանցն օգտվելով առիթից, որ ներկա են դպրոցների տնօրեններ, ուսուցիչներ կոչ արեց, որ նրանք իրենց դպրոցների շրջանավարտներին ուղղորդեն ուսումը շարունակելու մանկավարժական համալսարանում: Նա քաղաքային գրադարանին նվիրեց համալսարանի 90-ամյակի կապակցությամբ հրատարակված շքեղ ալբոմի հայկական տարբերակը, համալսարանը ներկայացնող ուղեցույցներ: Նա Շիրակի մարզային գրադարանին, Արթիկի քաղաքային գրադարանին, «Շանթ» հեռուստաընկերությանը նվիրեց իր «1000 հայազգի գեներալներ, ծովակալներ», «Խենթերը», «Ապարանի հերոսամարտը» գրքերի օրինակներ:

Հուզիչ էր Աշոտ Աջամօղլյանի խոսքը. «Ես ծնվել ու հասակ եմ առել այս քաղաքում եւ ավարտելով մանկավարժական մայր բուհը՝ վերադարձել ու աշխատել եմ այստեղ: Թեեւ հետագայում աշխատել եմ Գյումրիի մանկավարժական ինստիտուտում եւ արդեն մեկ տասնամյակից ավելի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում, երբեք չեմ կտրվել իմ ծննդավայրից: Ես միշտ այստեղ եմ եւ մասնակից եմ իմ քաղաքի հասարակական-մշակութային կյանքին ու դրանով միշտ հպարտանում եմ»: Նա Շիրակի մարզային գրադարանին եւ Արթիկի քաղաքային գրադարանին նվիրեց «Վերելք Արարատ» գրքի օրինակներ: Շնորհանդեսի մասնակիցները եւս ստացան գրքի հեղինակային ստորագրությամբ օրինակներ:

Շնորհանդեսին զուգահեռ կազմակերպվել էր Մանկավարժական համալսարանի նույն ամբիոնի աշխատակից, քարտեզագիր, ճանապարհորդ, լուսանկարիչ Տիգրան Բաբայանի «Պատմական Հայաստանը լուսանկարներում» ցուցադրությունը: Մասնակիցներն առանձնակի կարոտով դիտում էին Անի մայրաքաղաքի, Կիլիկիայի, Կապադովկիայի, Երզնկայի, Վանի, Տիգրանակերտի հայկական արժեքներին, բնապատկերներին նվիրված լուսանկարային տախտակները:

Վերջում ցուցադրվեց ռուս ալպինիստների խմբի Արարատի գագաթ բարձրանալուն նվիրված ֆիլմը:

ԱՆՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀՊՄՀ գիտական գրադարանի ավագ գրադարանավար

**Մայիսի 2-ին, ժ. 19:00-ին, Գաֆէսճեան արվեստի կենտրոնի «ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐՎԵՍՏԻ ՀԵՏ» շարքը ներկայացնում է՝**

**Արտավազդ Փելեշյան-75**

Միջոցառումը նվիրված է հայ մեծանուն ռեժիսոր Արտավազդ Փելեշյանի 75-ամյակին:

**Ծրագրում՝**

*1. Փելեշյանի կինոդարը*

Բանախոս՝ Հայկական կինոակադեմիայի նախագահ **Դավիթ Մուրադյան**

*2. Կինոնկարների ցուցադրում.*

«Մենք», 1969 թ.

«Տարվա եղանակները», 1975 թ.

Միջոցառման մուտքն անվճար է՝ նախնական գրանցմամբ:

*Տեղեկությունների համար զանգահարել 541932/34*

# «Կարո՞ղ է կինոն վերացնել ցեղասպանության տաբուները»

Այս խորագրով այսօր, մայիսի 2-ին, Բելմոնտի (Մասաչուսեթս, ԱՄՆ) Հայկական ուսումնասիրությունների եւ հետազոտությունների ազգային ասոցիացիայի (NAAS) շենքում դասախոսություն է կարդալու եւ իր կարճամետրաժ «Պոլիս» ֆիլմն է ցուցադրելու ճանաչված ամերիկահայ ֆիլմարտադրիչ Էրիկ Նազարյանը:

Քսանրոպեանոց ֆիլմը, որը 2011-ին արժանացել է «Լավագույն կարճամետրաժ ֆիլմ» մրցանակին 14-րդ «Արփա» միջազգային կինոճառատոնում, պատմում է ուդ նվագող մի հայ երաժշտի մասին, որը Ստամբուլ վերադառնալով՝ փորձում է գտնել իր պապի երաժշտական գործիքների խանութը:

Սցենարիստ եւ ֆոտոլրագրող Էրիկ Նազարյանը ծնվել է Հայաստանում, բայց մեծացել է Լոս Անջելեսում: Ավարտել է կինեմատոգրաֆիական արվեստների կրթօջախը:

Նրա 2007-ին նկարահանած «The Blue Howv» լիամետրաժ ֆիլմը, որն առաջին անգամ ցուցադրվել է Սան Սեբաստիանի միջազգային կինոփառատոնի ժամանակ, արժանացել է 6 միջազգային մրցանակների: Ներկայիս զբաղված Քրիս Բոհջալյանի աղմուկ հանած «Ավազե ամրոցի աղջիկները» վեպի էկրանավորման աշխատանքներով:

# Հոպկինսի հետ մենամարտը նշանակալի իրադարձություն կլինի Կարո Մուրադի կարիերայում

Հայ պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Կարո Մուրադի մարզական կարիերայում նշանակալի իրադարձություն է սպասվում: Գերմանիան ներկայացնող 29-ամյա բռնցքամարտիկն իրավունք է ստացել կիսածանրքաշային կարգի IBF-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը վիճարկելու չեմպիոնական գոտու տեր, 48-ամյա ամերիկացի անվանի բռնցքամարտիկ Բեռնարդ Հոպկինսի հետ: Այդ մենամարտը կկայանա հուլիսի 13-ին ԱՄՆ-ի Նյու Յորքի նահանգի Բրուկլին քաղաքում: Կարո Մուրադն ԱՄՆ-ում իր առաջին մենամարտը կանցկացնի:



Այդ մենամարտն իրոք նշանակալի իրադարձություն կլինի հայ բռնցքամարտիկի համար: Բեռնարդ Հոպկինսը պրոֆեսիոնալ բռնցքամարտում հայտնի է իր մի շարք նվաճումներով: Նա ամենատարեց աշխարհի չեմպիոնն է պրոֆեսիոնալ բռնցքամարտի պատմության մեջ: Աշխարհի չեմպիոնի տիտղոսը Հոպկինսը նվաճել էր մարտի 9-ին Բրուկլինում իր հայրենակից Կլաուդ Տավորիսի հետ կայացած մենամարտում՝ հաղթելով միավորներով (117-111, 116-112, 116-112): Դա պրոֆեսիոնալ ռինգում Հոպկինսի 63-րդ մենամարտն էր, որոնցում նա 53-րդ հաղթանակը տոնեց: 2 մենամարտ ավարտվել է ոչ-ոքի, 6-ում Հոպկինսը պարտվել է:

Կարո Մուրադը պրոֆեսիոնալ ռինգում անցկացրած 27 մենամարտերից շահել է 25-ը, մեկն ավարտել է ոչ-ոքի, կրել է մեկ պարտություն: Այդ միակ պարտությունը հայ բռնցքամարտիկը կրել է 2010-ի սեպտեմբերի 18-ին ուելսցի Նաթան Կլեւերլիից: 10-րդ ռաունդում մրցակիցը Մուրադին նոկաուտի էր ենթարկել:

Կարո Մուրադը լրջորեն է նախապատրաստվում առաջիկա մենամարտին: Նա հավատում է հաջողությանը:

«Այդ մենամարտն իմ մարզական կարիերայում նշանակալի իրադարձություն կլինի: Դիտել եմ Հոպկինսի անցկացրած մենամարտերից մի քանիսը: Կստիպեմ նրան վարձահատույց լինել իր թույլ տված սխալների համար: Հոպկինսին հաղթելուց եւ IBF-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը նվաճելուց հետո կցանկանայի վրեժխնդիր լինել Կլեւերլիից կրած միակ պարտության դիմաց: Ցանկալի կլիներ, որ այդ մենամարտն անցկացվեր չեզոք տարածքում: Առաջին մենամարտն անհաջող էր դասավորվել ինձ համար: Սակայն գիտեմ, որ կարող եմ նրան հաղթել», նշել է **Կարո Մուրադը**:

# «Ռեալը» 3-րդ տարին անընդմեջ ձախողվեց կիսաեզրափակիչում

**Չեմպիոնների լիգայի պատմության ընթացքում ընդամենը 15 անգամ է հաջողվել թիմերից որեւէ մեկին առաջին խաղում կրած խոշոր հաշվով պարտությունից հետո հաջորդ փուլի ուղեգիր նվաճել: Հետաքրքրական է, որ վերջին անգամ դա հաջողվել էր «Ռեալին»: 1975-76-ի չեմպիոնների գավաթի 1/8 եզրափակիչի առաջին խաղում Անգլիայում պարտվելով 1-4 հաշվով, «Ռեալը» պատասխան մրցավեճում համոզիչ ռեւանշի էր հասել (5-1) ու մտել էր քառորդ եզրափակիչ:**

**Եվ ահա 38 տարի անց Դորտմունդի «Բորուսիայի» հետ մրցավեճում «Ռեալը» հայտնվել էր նույնպիսի իրավիճակում՝ առաջին խաղում պարտվելով 1-4 հաշվով: Սակայն այս անգամ հաջողությունը կրկնել «Ռեալին» չհաջողվեց: Միայն խաղասկզբում եւ խաղավերջում իսպանական ակումբը կարողացավ գերազանցել մրցակցին ու Բենզեմայի եւ Սերխիո Ռամոսի ջանքերով 2 գոլ խփել, սակայն դա բավարար չէր եզրափակիչի ուղեգիր նվաճելու համար:**




**«Ռեալը» 24-րդ անգամ էր վիճարկում չեմպիոնների գավաթի եզրափակիչի ուղեգիրը: Արքայական ակումբը միայն 12 անգամ է հաղթահարել կիսաեզրափակիչի արգելքը: Վերջին անգամ դա հաջողվել էր 2002-ին, երբ առավելության էր հասել «Բարսելոնի» նկատմամբ (2-0, 1-1): Ի դեպ, հենց այդ տարի «Ռեալը» վերջին անգամ դարձավ չեմպիոնների գավաթակիր: Վերջին 3 խաղարկություններում «Ռեալը» մշտապես պայքարից դուրս է մնում կիսաեզրափակիչում: Իսկ Դորտմունդի «Բորուսիան» 2-րդ անգամ իրավունք ստացավ հանդես գալու չեմպիոնների լիգայի եզրափակիչում: 1997-ին թիմի նորամուտը եզրափակիչում հաջողությամբ պսակվեց: «Բորուսիան» 3-1 հաշվով հաղթեց Թուրինի «Յուվենտուսին»:**

**«Ռեալ»-«Բորուսիա» խաղից հետո թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:**

**Ժոզե Մոուրինյու** (Ռեալ)-Մենք մոտ էինք հաջողությանը: Եթե ավելի շուտ գոլ խփեինք, ապա հնարավորություն կունենայինք հաղթելու մեզ ձեռնտու հաշվով: Մրցակիցը մի քանի հիանալի պահ ունեցավ, սակայն չօգտագործեց: Այսօր «Ռեալը» ներկայացավ որպես բնավորություն ունեցող եւ հաղթանակի վճռականությամբ լի թիմ: Կարող էինք հայտնվել եզրափակիչում: Հիասթափված եմ, որ այս մրցաշրջանում չհաջողվեց նվաճել չեմպիոնների գավաթը: Կարեւոր չէ՝ կմնա՞մ «Ռեալում», թե՞ ոչ: Այս թիմը բազմիցս նվաճել է պատվավոր մրցանակը: Մեզ հաջողվեց որոշ չափով վերականգնել կորցրած հեղինակությունը, սակայն մրցաշարում այդպես էլ չհաղթեցինք: Հաղթանակն անպայման կլինի ապագայում: Իսկ ներկայումս մենք պետք է ձգտենք նվաճել Իսպանիայի գավաթը:

**Յուրգեն Կլոպ** («Բորուսիա»)-Խաղավերջում շատ լարված պայքար ընթացավ, հակառակորդները ժամանակ կարող էին գոլեր խփել: Գիտեինք, որ «Ռեալը» շատ ագրեսիվ է տրամադրված, ուստի ձգտում էինք առաջին 20-25 րոպեներին զգել խաղի տեմպը: «Բորուսիայի» ֆուտբոլիստներն արժանի են դրվատանքի: Թեեւ առջեւում «Բավարիայի» հետ հանդիպումն է, սակայն նրանց կթույլատրեմ տոնել այս հաջողությունը Մադրիդում: Իսկ ես հյուրանոցում կհանգստանամ՝ գարեջուր ըմպելով:

# «Մանչեսթր Յունայթեդը» ցանկանում է Ռոնալդուին թիմ վերադարձնել

Եթե «Մանչեսթր Յունայթեդը» շահավետ պայմանագիր կնքի հովանավորների հետ, ապա մինչեւ 70 մլն ֆունտ ստեռլինգ կառաջարկի «Ռեալին» Քրիշտիանու Ռոնալդուին վերադարձնելու համար: Անգլիական ակումբը նաեւ իր ֆուտբոլիստներից մեկին կտրամադրի «Ռեալին»:

Սակայն ակումբի հովանավորներից մեկը՝ «Նայքը» հրաժարվել է լրացուցիչ ներդրում կատարել «Ռեալում», իսկ Chevrolet-ի հետ բանակցությունները շարունակվում են:

ՇԱԽՄԱՏ

# Արոնյանն արժանացավ 30 հազար եվրո պարգեւավճարի

**Լեւոն Արոնյանը դարձավ Ալյոխինի հուշամրցաշարի հաղթող՝ 9 հնարավորից վաստակելով 5,5 միավոր: Ավարտական տուրում նա կարեւոր հաղթանակ տոնեց Մաքսիմ Վաշիե-Լագրավի նկատմամբ ու միավորներով հավասարվեց Բորիս Գելֆանդին, որը հաշտություն էր կնքել Անանդի հետ: Գլխավոր մրցանակի տերը որոշվեց լրացուցիչ գործակիցներով: Առաջին ցուցանիշը՝ սեւերով խաղացած պարտիաների քանակը, երկուսի մոտ էլ հավասար էր՝ 5-ական: Արոնյանը 2-րդ ցուցանիշով գերազանցեց Գելֆանդին ու դարձավ մրցաշարի հաղթող: Նա տոնել էր 3 հաղթանակ, Գելֆանդը՝ 2: Վերջինս կստանա 20 հազար եվրո:**



**Կրամնիկը հաղթեց Ադամսին, Վիսյուգով-Լիժեն, Սվիդլեր-Ֆրեսինե պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի: 5 միավորով 3-րդ տեղը զբաղեցրեց Անանդը, որը 15 հազար եվրո կստանա: Հաջորդ տեղերում են Վաշիե-Լագրավը, Ադամսը, Ֆրեսինեն, Վիսյուգովը, Կրամնիկը՝ 4,5-ական, Լիժեն՝ 3,5, Սվիդլերը՝ 3 միավոր:**

# Մխիթարյանը հետապնդում է առաջատարներին

**Բրազիլիայում ընթացող շախմատի աշխարհի առաջնության փնջային մրցաշարի 5-րդ տուրում Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը ոչ-ոքի խաղաց Յորգ Կորիի հետ, իսկ Արմեն Բրուտյանը պարտվեց Ան Չումպիտազին: Մխիթարյանը 3,5 միավորով 14-րդ տեղում է, իսկ Բրուտյանը 3 միավորով զբաղեցնում է 20-րդ հորիզոնականը:**

**4,5 միավորով աղյուսակը գլխավորում են բրազիլացի Ալեքսանդր Ֆիեռն ու պերուացի Դեյսի Կորին: Ֆիեռը հաշտություն կնքեց Ռաֆայել Լեյթաոյի հետ, իսկ Կորին հաղթեց Ռենատո Քուինտիլիանոյին:**

# Շահինյանը փորձաշրջան է անցնում «Բրագայում»

**«Միկայի» 17-ամյա կիսապաշտպան Սարգիս Շահինյանը փորձաշրջան է անցնում պորտուգալական «Բրագայում»: Վերջինս երկրի առաջնության 3-րդ մրցանակակիրն է: Պատանի ֆուտբոլիստն արդեն մասնակցել է թիմի մի քանի մարզմանը ու վատ տպավորություն չի թողել: Սարգիս Շահինյանն ընթացիկ առաջնությունում է հայտնվել «Միկայի» հիմնական կազմում՝ դառնալով թիմի առաջատար ֆուտբոլիստներից մեկը:**

# 6 հայ շախմատիստներ 100 ուժեղագույնների շարքում են

**ՖԻԴԵ-ն հրապարակել է աշխարհի ուժեղագույն շախմատիստների վարկանիշային հերթական ցուցակը մայիսի 1-ի դրությամբ: Լեւոն Արոնյանը վարկանիշն ավելացրել է 4-ով (2813) եւ պահպանել է 2-րդ հորիզոնականը: Իսկ ահա աղյուսակը գլխավորող Մագնուս Կառլսենի վարկանիշը նախորդ ամսվա համեմատ նվազել է 4-ով (2868):**

**3-րդ հորիզոնականը զբաղեցնող Վլադիմիր Կրամնիկի վարկանիշը աճել է 10-ով (2811): Վեսելին Թոփալովը 22-ով ավելացնելով իր վարկանիշը (2793), 8-րդ տեղից բարձրացել է 4-րդ հորիզոնական: Լավագույն տասնյակում են նաեւ Վիշվանաթան Անանդը (2783), Ալեքսանդր Գրիշչուկը (2779), Հիկարու Նակամուրան (2775), Ֆաբիանո Կարուանան (2774), Պյոտր Սվիդլերը (2769) եւ Սերգեյ Կարյակինը (2767): Ընդ որում Սվիդլերը վարկանիշն ավելացրել է 22-ով եւ 14-րդ տեղից տեղափոխվել է 9-րդ հորիզոնական:**

**100 ուժեղագույն շախմատիստների ցանկում ընդգրկված են եւս 4 հայ շախմատիստներ: Վլադիմիր Հակոբյանը վարկանիշն ավելացրել է 1-ով (2705) եւ 42-րդ տեղից բարձրացել է 39-րդ հորիզոնական: Սերգեյ Մովսիսյանը 2-ով նվազեցրել է վարկանիշը (2693), սակայն պահպանել է դիրքը 57-րդ տեղում: Գաբրիել Սարգսյանը վարկանիշը ավելացրել է 1-ով (2667) ու կրկին պահպանել է տեղը 76-րդ հորիզոնականում: Ֆրանսահայ Տիգրան Ղարամյանը վարկանիշը նվազեցրել է 6-ով (2657) եւ 79-րդ տեղից նահանջել է 89-րդ հորիզոնական: Իսկ Տիգրան Պետրոսյանը դուրս է մնացել 100 ուժեղագույնների ցանկից:**

**Կանանց դասակարգման ցուցակի անփոփոխ առաջատարը Յուդիթ Պոլգարն է (2696): Լավագույն տասնյակում են Հոու Յիֆանը՝ 2617, Համփի Կոներուն՝ 2597, Աննա Մուզիչուկը՝ 2585, Չժաո Հուեն՝ 2565, Կատերինա Լահնոն՝ 2548, Նանա Ձագնիձեն՝ 2545, Յու Վենջյունը՝ 2544, Նադեժդա Կոսինցեւան՝ 2531 եւ Մարի Սեբագը՝ 2527:**

**Էլինա Դանիելյանը պահպանել է 2478 վարկանիշն ու 25-րդ տեղը դասակարգման ցուցակում: Անփոփոխ են նաեւ Լիլիթ Մկրտչյանի ցուցանիշները (2466, 32-րդ տեղ):**

**Հայաստանը ՖԻԴԵ-ի անդամ երկրների ցանկում 2658 վարկանիշով 6-րդ տեղում է: Անփոփոխ առաջատարը Ռուսաստանն է՝ 2749, որին հաջորդում են Ուկրաինան՝ 2699, Չինաստանը՝ 2667, Հունգարիան՝ 2662 եւ Ֆրանսիան՝ 2660: 7-10-րդ տեղերում են ԱՄՆ-ը՝ 2656, Հնդկաստանը՝ 2639, Հոլանդիան՝ 2635 եւ Լեհաստանը՝ 2631:**

# Արմեն Սանամյանը գլխավորեց «Ալաշկերտը»

**Բարձրագույն խմբի ուղեգիր նվաճած «Ալաշկերտի» նոր գլխավոր մարզիչ է նշանակվել Արմեն Սանամյանը: Նա այդ պաշտոնում կփոխարինի վերջերս պաշտոնանկ արված Ալբերտ Սարգսյանին, որը մեծ ներդրում ուներ թիմի հաջողությունում:**

**Սանամյանը գլխավորում էր նորաստեղծ «Ուրարտուն», որը ցանկություն ունի մասնակցելու Հայաստանի առաջին խմբի առաջնությանը: «Ուրարտուի» ղեկավարությունը մոտ օրերս կորոշի, թե ով է ստանձնելու թիմի ղեկը:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Թեհրանի հայոց թեմի գործադիր մարմնի ընտրություններն ու Դաշնակցության եւ Անթիլիասի անհանդուրժողականությունը

Դաշնակցությունը Հայաստանում դեմոկրատիայի դասեր է տալիս, սակայն Թեհրանում հակադեմոկրատական գործունեությունը չի դադարեցնում

Թեհրանի հայոց թեմի կանոնադրության համաձայն, 4 տարին մեկ ընտրվում է թեմի օրենսդիր մարմինը՝ պատգամավորական ժողովը, որն, իր հերթին, երկու տարին մեկ ընտրում է համայնքի 11 հոգուց բաղկացած գործադիր մարմին՝ թեմական խորհուրդ: Գործադիր մարմնի ընտրությունները ծրագրվում են Դաշնակցության Թեհրանի կենտրոնական կոմիտեի միջոցով:

Վերջին 12 տարվա ընթացքում Դաշնակցությունը, դեմոկրատ ձեւանալու նպատակով, մեկ կամ երկու հոգու՝ որպես ընդդիմադիր անհատների, ընտրում եւ ընդգրկում է թեմական խորհրդի կազմում: Շուրջ երկու ամիս առաջ կայացած ԹՀԹ պատգամավորական ժողովի վերջին ընտրություններում, ըստ հստակ փաստերի, ընդդիմադիրները շահեցին քվեների 40 տոկոսը: Ժողովրդավարական հասարակարգերում այդ տոկոսի համեմատ ընդդիմադիրը գործադիր մարմնում պետք է ներկայանան 4 կամ 5 ներկայացուցչով: Նրանք պետք է ընտրվեն հենց ընդդիմադիր ուժերի ներկայացուցիչների կողմից եւ ոչ թե, ինչպես նախկինում, Դաշնակցությանը ցանկալի «ընդդիմադիր» դաշտից:

Թեհրանի ժողովրդավարական ուժերը այս անգամ համախմբվելով պահանջեցին, որ միայն իրենց ընտրած թեկնածուներին են ներկայացնելու թեմական խորհրդի կազմի համար, հակառակ դեպքում բողոքի ակցիա կկազմակերպեն ու որեւէ ձեւով չեն համագործակցի պարտադրվող ազգային իշխանության հետ: Դաշնակցությունը փորձել եւ փորձում է տարբեր եղանակներով պառակտում առաջացնել ընդդիմադիր ուժերի շարքերում, այն հույսով, որ կկարողանա իր ուզած ձեւով համայնքի գործադիր մարմինը ձեւավորել եւ պարտադրել: Սակայն այս անգամ ընդդիմադիր ուժերի համախմբված ու կազմակերպված լինելու պատճառով դա նրան չի հաջողվում: Այդ իսկ պատճառով ստիպված եղավ համայնքի գործադիր մարմնի ընտրությունները 40 օրով հետաձգել: Հիշյալ կուսակցությունը, ըստ էության, չի ցանկանում հասկանալ, որ քաղաքական միասնական ընդդիմադիր ուժի հետ գործ ունի, քանի որ նախապես աշխարհով մեկ պրոպագանդել է, որ Իրանում հայկական քաղաքական միակ ուժն ինքն է:

Հետաքրքրական են նաեւ Անթիլիասի կաթողիկոսության դիրքն ու վերաբերմունքը: Ընդդիմադիր ճակատը, նախքան ընտրությունների օրը, հանդիպում ունեցավ Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Սեպուհ արք. Սարգսյանի հետ, ով շեշտեց, թե մտքերի զանազանությունը գործադիր մարմնում հարստություն է, եւ խոստացավ, որ կաջակցի համանքային հարցերը ժողովրդավարական եղանակով հանգուցալուծելու հարցում: Սակայն մի քանի օր անց նա կատարեց ճիշտ հակառակը: Դաշնակցությունը բացառեց, որ երկու հոգի՝ «Արաքս» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր ու տարիների ազգային ու հասարակական աշխատանքի փորձ ունեցող գործիչ Մովսես Քեշիշյանը եւ «Համայնք» կայքէջի պատասխանատու, Հայ աշխարհատեսների միության ներկայացուցիչ եւ 12 տարվա պատգամավորական ժողովի փորձ ունեցող դոկտ. Ռուբիկ Սարդարյանը, առաջադրվեն որպես գործադիր մարմնի թեկնածուներ: Իհարկե, այս երկու հոգուց միայն դոկտ. Ռուբիկ Սարդարյանն էր թեկնածուների շարքում, որի թեկնածությանը դեմ էր հենց ինքը՝ թեմիս առաջնորդ Սեպուհ արք. Սարգսյանը, ասելով, որ Սարդարյանը հակաճառել է Արամ Վեհափառին եւ այդ իսկ պատճառով պետք է զրկվի թեկնածությունից, ինչպես նաեւ պետք է արգելվի գործադիր մարմնին նրա անդամությունը:

Հակաճառելու մասին անհիմն հայտարարությունը վերաբերում է Արամ Վեհափառի Թեհրան կատարած վերջին այցելությանը, երբ Դաշնակցությունը պարսկերեն լեզվով հրապարակած հայտարարություններում եւ առաջնորդարանի ճակատում ամրացված պաստառում նրան ներկայացնում էր որպես «ամենայն հայոց կաթողիկոսի», եւ դոկտ. Ռուբիկ Սարդարյանը Վեհափառի ուշադրությանն էր հանձնել կատարված կոպիտ սխալը: Սարդարյանի այս մոտեցումը, ըստ էության, դուր չէր եկել Թեհրանի հայոց թեմի առաջնորդին, եւ ընդդիմադիր՝ ոչ դաշնակցական ներկայացուցիչներին խորհուրդ էր տվել հանել նրա թեկնածությունը: Սակայն ընդդիմադիր ճակատը պնդել էր իր դիրքորոշումը եւ սրբազան հորը խորհուրդ տվել Դաշնակցության խաղի մեջ չներքաշվել եւ իր հոգեւոր դիրքը չնսեմացնել:

Դաշնակցությունը սրբազան հոր մոտեցումը «պատրվակելով» եւ ընդդիմադիրներին զիջումներ չանելով պատճառ դարձավ, որ ընտրությունները հետաձգվեն: Պատգամավորական ժողովի դիվանը պաշտոնապես հայտարարեց. «Որպեսզի համայնքի բոլոր շերտերը ներկայություն ունենան գործադիր մարմնում եւ քանի դեռ համաձայնություն ձեռք չի բերվել կողմերի միջեւ, ընտրությունները մեկուկես ամսով հետաձգվում են՝ միմյանց հետ համաձայնության գալու համար»:

Հարցերը փակուղուց հանելու նպատակով վերջերս այդ համաձայնությունը ձեռք բերվեց ու որոշվեց, որ 4 կամ 5 հոգու փոխարեն միայն երեք հոգի ոչ դաշնակցական ընդգրկվեն գործադիր մարմնի 11 հոգանոց կազմում, սակայն կրկին սրբազան հոր անունից հայտարարվեց, թե իբր՝ ով Արամ Վեհափառին քննադատել է, իրավունք չունի թեմական խորհրդի թեկնածու դառնալու: Սրան գումարվեց Դաշնակցության կողմից ձեռք բերված համաձայնության խախտումը՝ թեկնածուների քանակը երեքից կրճատելով երկուսի, ինչը պատճառ դարձավ, որ ժողովրդավարական ճակատը կտրուկ մերժի եւ իր 2 թեկնածուներին հետ կանչի:

Դաշնակցության անհանդուրժողականությունը համայնքում առաջացրել է անհանգստություն: Կուսակցությունը չի տիրապետում իր իսկ սխալների հետեւանքով առաջացած իրավիճակին, չի կարողանում նույնիսկ իր ներքին հակասություններին դեմոկրատական լուծումներ տալ: Արդեն բացահայտորեն դաշնակցական տարբեր խմբավորումները մերկացնում են միմյանց ոչ ժողովրդավարական ու համայնքի միասնությունը, շահը եւ տարբեր հատվածների իրավունքը ոտնահարող արարքները: Թեհրանի Դաշնակցության ծայրահեղական թեւը աշխատում է բոլոր հարցերը լուծել մոլեռանդությամբ եւ հրամայական եղանակով, որը չի ստացվում եւ ավելի է բարդացնում համայնքի իրավիճակը, ժողովրդի մեջ խորացնելով դժգոհությունը, ինչը նաեւ նպաստում է արտագաղթին:

Հույս ունենք, որ Հայաստանի դաշնակցականները, որ ներկայումս գտնվում են ոչ իշխանական դիրքում, կըմբռնեն եւ կսրբագրեն Թեհրանի իրենց գործընկերների պառակտիչ գործունեության ծանրակշռությունը, որովհետեւ մեր նախկին զգոնության եւ սթափության հրավերները բախվել են ՀՅԴ-ի երեւանյան պատասխանատուների երկու չափ, երկու կշիռ ոչ պարկեշտ վերաբերմունքին:

Ժամանակները փոխվել են, ազգի շահերից ելնելով՝ բոլորը պետք է հանդուրժեն եւ մեկը մյուսին հարգեն՝ որպես քաղաքական կողմի:

ՍՈՒՍԱՆՆԱ ՀԱՄԲԱՐՁՅԱՆ
Թեհրան

ՈՒՂԻՂ ԳԾՈՎ

# «Հիշողությունների մեջ մոլորված»

## *Օն-լայն բանախոսություն Ամերիկյան համալսարանում*




**Հայերի ցեղասպանության վերաբերյալ Թուրքիայի պետության պաշտոնական քաղաքականությունը եղել եւ մնում է հերքումը: Այդ քաղաքականության բաղկացուցիչ մասերն են երեք «Մ-երը»՝ մոռացումը, միստիֆիկացիան եւ մանիպուլյացիան: Բայց երբ սոցիալական հիշողությունն ենք փորփրում թուրք հասարակության, տեսնում ենք բոլորովին տարբեր մի պատկեր: Նույնիսկ մոտ մեկ դար անց մեծահասակ թուրքեր եւ քրդեր, հատկապես արեւելյան Թուրքիայում, դեռ վառ հիշողություններ ունեն հայերի ցեղասպանության մասին», ասում է Ամստերդամի «Պատերազմի, հոլոքոստի եւ ցեղասպանության ուսումնասիրությունների ինստիտուտի» ավագ կուրսերի տնօրեն դոկտ. Ուղուր Ումիտ Ունգորը: Նա այսօր՝ մայիսի 2-ին, ժամը 18.30-ին Հայաստանի ամերիկյան համալսարանում Ամստերդամից ուղիղ կապով օն-լայն բանախոսություն է կարդալու «Հայերի ցեղասպանության հիշողությունը թուրքական ինքնության մեջ» թեմայով:**

**Դոկտ. Ունգորը Ուտրեխտ համալսարանի պատմության ամբիոնում պրոֆեսորի օգնական է: Նրա վերջին շրջանի գրքերից են «Առգրավում եւ ոչնչացում: Հայկական ունեցվածքի խլումը երիտթուրքերի կողմից» եւ «Արդի Թուրքիայի ստեղծումը: Ազգություն եւ պետություն, 1913-1950 թթ.» հատորները:**

Հ. Ծ.

# Վերափոխվող Թուրքիայում այլեւս չի բացահայտվի Դինքի սպանությունը

*1-ին էջից*

**Սակայն բացահայտվեցին միայն Օգյուն Սամասթ կոչեցյալ մարդասպանին սպանության գործում աջակցողները, որոնցից Յասին Հայալն է, որ Սամասթի հետ ազատազրկման է դատապարտվել: Հակառակ դրան, Տրապիզոնի հետախուզական վարչության հրազեկիչ Էրհան Թունջելը բազմաթիվ այլ ամբաստանյալների հետ ազատ է արձակվել:**

**Եթե Դինքի սպանությունը լիարժեք բացահայտվեր, գուցե հնարավոր լիներ կանխել ժամկետային զինծառայող Սեւակ Շահինի զորամասում 2011-ի ապրիլի 24-ին իրականացված սպանությունը: Սակայն սա Հայոց ցեղասպանության հարցում Թուրքիայի ժխտողականության յուրատեսակ արձագանքն է, հետեւաբար սպանությունը պետականորեն կազմակերպվածություն է ենթադրում: Իսկ այդ կարգի սպանությունները, որպես կանոն, չեն բացահայտվում, ինչպես Հրանտ Դինքի պարագայում էր:**

**Բացահայտումները դեռ մի կողմ, սպանության պատասխանատուների պաշտոններն են բարձրացնում Թուրքիայում: Խոսքը տվյալ դեպքում վերաբերում է Էնգին Դինչին: Այս արարածը Տրապիզոնի հետախուզական վարչությունում բաժնի վարիչի կարգավիճակով առաջինն էր ծանուցում ստացել Դինքի դեմ կազմակերպվող սպանության մասին: Նրա պաշտոնի բարձրացմանը ապրիլի 30-ի համարում «Ցնցող նշանակում» վերնագրով անդրադարձել է Odatv.com կայքէջը:**

**Ահա թե ինչ է գրել. «Ինչպես «Հյուրիեթն» է տեղեկացնում, նշանակումը կատարվել է երեկ երեկոյան, այսպիսով Էնգին Դինչը դարձել է Տրապիզոնի անվտանգության գերատեսչության հետախուզական վարչության պետը: Հետախուզության նոր ղեկավարը մեր հասարակությանը հայտնի դեմք է: Հրանտ Դինքի դեմ ձեռնարկվող սպանության մասին առաջին ծանուցումը ինքն էր ստացել: Նա էր, որ սպանությունը ծրագրելու մեջ մեղադրվող Էրհան Թունջելին դարձրել էր իրազեկիչ: Դինքի սպանության առնչությամբ Դինչը բացատրություն է տվել Թուրքիայի ազգային մեծ ժողովի մարդու իրավունքների հանձնաժողովին: Նա ասել է, որ նախապատրաստվող սպանության ծանուցումն ստանալուն պես իրազեկել է Ստամբուլի հետախուզական վարչությանը, միաժամանակ հատուկ խոսակցություն է ունեցել Թունջելի հետ, որպեսզի վերջինս սպանությունից հետ կանգնելու հարցում համոզի Յասին Հայալին»:**

INDEX VARTA
Ակումուլյատորների մասնագիտացված սրահ

Tel: (+374 10) 572011
Fax: (+374 10) 552085
Web: www.varmex.am
Հասցե՝ Երեւան, Տիգրան Մեծի 46
E-mail:varmex@mail.ru
FILTRON

ՀՊՃՀ (ՊՈԼԻՏԵԽՆԻԿ)
մարմնակրթության եւ սպորտի կենտրոնը հրավիրում է բոլոր ցանկացողներին մարզվելու կենտրոնում գործող հետեւյալ խմբակներում՝ լող, բազկամարտ, սեղանի թենիս, բասկետբոլ, աթլետիզմ: Ձեզ հետ կաշխատեն բարձրակարգ մասնագետներ: Ցանկացողներին խնդրում ենք զանգահարել 010567784: Հասցե՝ Տերյան 105, ՀՊՃՀ, 21-րդ մասնաշենք:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 1.5.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: